

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԸ ՀԱՄԱՋԱՐԱԿԻՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՓՈՒԿԵԼՈՒ ԱՌԻԹԸ ՈՒՆԻ

ՍԱՆԱ, ԺՂՆԵ. - Համաշխարհային Առողջապահության Կազմակերպությունը յայտնեց, որ հակառակ անոր որ Միջին Արևելքի պետություններուն մէջ պսակածէ ժահրով վարակողներուն թիւը մտահոգիչ ձեւով կը բարձրանայ, սակայն շրջանի պետութիւնները առիթը ունին սահմանափակելու համաճարակին տարածումը:

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը վկայակոչելով կազմակերպության տարածաշրջանային գրասենեակի արտակարգ պարագաներու տնօրէն Ռիչըրտ Պրենընի յայտարարութիւնը, դիտել տուաւ որ ներկայիս կը պահանջուի ամբողջական ծրագիր մը յառաջացնել ընդհանուր առողջապահության պահպանման համար: Օրինակ. կասկածելի պարագաները կանուխ քննութեան ենթարկել, վարակողները անմիջապէս մեկուսացման կեդրոններ փոխադրել եւ այլն:



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ ԿՈՒՂԸ ՀԻՄՆԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՈՒՐՏԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ

Չորեքշաբթի, 8 Ապրիլ 2020-ին, Համաշխարհային Առողջապահության Կազմակերպութիւնը կոչ ուղղեց բոլոր պետութիւններուն հիւանդապահության ոլորտն ու ուսուցումը զարգացնելու, զգուշացնելով ընդհանուր առմամբ հիւանդապահական քատրերու նուազումէն, յատկապէս պսակածէ ժահրի համաճարակի տարածման ներկայ պայմաններուն մէջ: Կազմակերպութիւնը «Հիւանդապահության Իրավիճակը 2020-ին» վերնագիրը կրող գեկոյց մը ներկայացուց, որուն մէջ յստակօրէն յայտնեց, որ այսօր աշխարհի մէջ 28 միլիոն հիւանդապահ եւ հիւանդապահուի գոյութիւն ունի, սակայն համաշխարհային բացթողումը ամբողջացնելու համար կարիքը կայ 5,9 միլիոն հիւանդապահի եւս: Անոնց մեծամասնութիւնը պէտք է ուղարկուի Ափրիկէ, Հարաւարեւելեան Ասիա, Միջին Արեւելք, Արաբական Ծոցի եւ Լատինական Ամերիկայի կարգ մը երկիրներ:



ՔՐԻՍՏԱԾՈՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՄՆԵՐԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՍՏԱԶԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Քրիստափոր Ուսանողական Միութեան անդամները պսակածէ ժահրէն նախագգուշացման աշխատանքներուն իրենց կամաւոր մասնակցութիւնը բերին՝ ստանձնելով Հալէպի հայկական կառոյցներու ախտահանումը:



Անոնք նախ ախտահանեցին Արամ Մանուկեան Ժողովրդային Տունը, ապա Սուրիահայ Օգնութեան Խաչի Առողջապահական կեդրոնն ու ՍՕԽ-Ազգ. Պատասպարանը:

Յաջորդ օրը, Երեքշաբթի, 7 Ապրիլ 2020-ին, Քրիստափոր Ուսանողական Միութեան անդամները ախտահանեցին Ազգ. Զբոսայգիի կառոյցը:

Այս գործընթացը սկսաւ ախտահանման համար ապահովուած առողջապահական յատուկ կազմածներով, զգեստներով եւ ախտահանիչ դեղերով:

Աշխատանքը կը շարունակուի:

Ս. Յարութեան Պատգամ

«ՔՐԻՍՏՈՍ ԲՈՒՈՐԻՍ ՀԱՄԱՐ ՄԵՌԱՄԷ»

Այսօր մեզի համար յաղթանակի օր է, ուրախութեան եւ ցնծութեան օր է, որովհետեւ Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ:

Մարդը, որպէս տկար արարած, կը վախնայ մահէն եւ իր երկրաւոր կեանքի ընթացքին ամէն ջանք կը թափէ մահը հեռացնելու եւ վանելու իր կեանքէն: Քրիստոս եղաւ առաջինը, որ իր մահով մահը խեղդեց եւ իր խաչելութեամբ ու մահուամբ յաղթանակեց մահուան, կը յայտարարէ Պօղոս առաքեալ (Ա. Կր 15.55-57):

Քրիստոսի յարութեան այս օրուան մէջ, քրիստոնէայ հաւատացեալը հրաւիրուած է փառք եւ գոհութիւն վերառաքելու իր Արարիչին, որ բոլորիս յաղթանակ շնորհեց: Ամէն անգամ Ս. Չատկուան տօնին կը յիշենք այդ յաղթանակը եւ ուրախութեամբ զիրար կ'ողջունենք եւ կ'աւետենք ըսելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Յարութեան ուրախութիւնը մեզի շնորհուած է եւ տարբեր է աշխարհի անցողական ուրախութիւններէն, որովհետեւ հոգեկան ուրախութիւն, յաղթանակ է, զոր մարդը կու գայ տօնելու: Յարութեան յաղթանակը հոգիին եւ բարոյական ճշմարտութիւններուն յաղթանակն է, լոյսին յաղթանակն է խաւարին դէմ եւ սիրոյ յաղթանակը՝ ատելութեան դէմ: Այսօր այն օրն է, երբ Աստուած իր գերագոյն սերը յայտնեց մարդուն եւ այդ սիրոյն շնորհիւ կեանքը յաղթանակեց մահուան: «Մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբ իւրով մեզ զկենսա պարգ տեւաց», կ'երգէ Հայ Եկեղեցին այսօր: Քրիստոսի ճամբով, կեանքը թագաւորեց մահուան վրայ եւ Քրիստոսի ճամբով այդ կեանքը տրուեցաւ մարդկութեան: Հետեւաբար, Քրիստոսի պարգեւած կեանքը յաւիտենական եւ անվախճան կեանքն է:



Սիրելի՛ հաւատացեալներ, Այսօր մեզի համար՝
Ս. Յարութեան առաւօտ է: Մահը կլանուեցաւ, յաւիտեան բնաջինջ եղաւ (Ես 25.8): Յարութեան աւետիսը յաղթանակով գրաւեց մարդոց սրտերը:

Բ. Կեանքի առաւօտ է: Սուգը, տրտմութիւնը եւ յուսախաբութիւնը վերջ գտան մարդոց կեանքէն: Մարդկութիւնը առաքեալներուն հետ միաբերան Քրիստոսի յարութեան աւետիսը կը սփռէ՝ սիրոյ եւ երախտագիտութեան պարտքը տալով:

Կեանքը մահուան մէջ կարելի չէ փնտռել: «Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք: Հոս չէ՛ Ան. յարութիւնն առաւ», կ'ըսէ Ղուկաս Աւետարանիչը (Ղկ 24.5): Պօղոս առաքեալ նոյնպէս կը վկայէ ըսելով. «Քրիստոս

Հալէպ, 12 Ապրիլ 2020
 Մասիս Եպս. Զօպուեան
 Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմին

Շաբ.՝ Էջ 2 ➔

Խմբագրական

ՊՍԱԿԱԶԵԻ ԺԱՅՐԸ ՀԱՄԱՇԽԱՐԻՎՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻՋՈ՞Ց

Պսակազեի ժաիրին համաճարակը համաշխարհային նոր, բազմաբեկեռ համակարգի մը ձեռնարկման քայլերը արագացուցած ըլլալ կը թուի: Այս ժաիրին տարածումը, որ կողմնալուծ ըլլալ անոր ետին, երկու գերպետութիւններու՝ ԱՄՆ-ի եւ Չինաստանի տնտեսական եւ ճարտարագիտական կարողութիւններու տարբերութիւնը ընդօժեց եւ տնտեսական թէ առողջապահական համաշխարհային տագնապները դիմագրաւելու իրաքանչիւրին միջոցները, լծակները, կարելիութիւններն ու նոյնիսկ մարդասիրական մօտեցումները երեւան հանեց:

Վերլուծաբաններու համաձայն, պսակազեի ժաիրի համաճարակէն վերջ, աշխարհը կ'ուղղուի համաշխարհային երրորդ պատերազմի մը, որուն աւարտին կը նախատեսուի, որ աշխարհի միաբեկեռ ղեկավարումը մէկընդմիջ տ վերանայ ու Չինաստանը դառնայ այն երկրորդ բեկեռը, որ ոչ թէ բռնի ուժով, այլ տնտեսութեան եւ ճարտարագիտութեան իր կարողութիւններով հաստատե ղեկավարի իր դերը: Բազմաբեկեռ համակարգի մը գոյացման պարագային Ռուսիան, Եւրոպան եւ Իրանը իրենց ազդեցութեան բանեցման, յատկապէս միջազգային ապահովութեան պահպանման մէջ ԱՄՆ-ի յառաջացուցած մեծ բացը գոցելու իրենց արդարացի նկրտումները պիտի ունենան: Միջին Արեւելքի դեպքերը եկան վկայելու, որ Միացեալ Նահանգներ համաշխարհային ապահովութեան երաշխաւորը ըլլալու իր դերը համարեա՛ կորսնցուցած է, տակաւին չենք խօսիր համաճարակի տարածման պայմաններուն մէջ կարգ մը երկիրներուն սահմանուած տնտեսական պատիժները շարունակելու եւ առողջապահական տագնապը սաստկացնելու իր դերակատարութեան մասին:

Երկբեկեռ կամ բազմաբեկեռ համակարգը մասամբ կրնայ մեղմացնել շարք մը տագնապներ՝ յօգուտ աշխարհին, որովհետեւ վերջին տարիներու տագնապներուն մեծ մասը այս միաբեկեռ համակարգին մըրցունակ ու գերտիրոջ ուժ մնալու նկրտումներուն հետեւանքով սասկացան: Տագնապները ո՛չ ժողովրդավարական կարգեր հաստատելու, ո՛չ սոսկ վարչակարգեր փոխելու, ոչ ալ տարածքներ գրաւելու համար էին: Տագնապներուն տուժող հիմնական պատճառը Չինաստանին ԱՄՆ-ի մրցակից բեկեռ վերածուելու ջանքերու կասեցման փորձերն էին, որոնք ի թերեւ ելան: Այս գարգացումը, որ նախատեսուած ալ էր Միացեալ Նահանգներու հետագօտական կեդրոններուն կողմէ, ընդունելի չէր: Միւս կողմէ, Չինաստան բախումի ուղղուելու կամ աշխարհը ղեկավարելու ծրագիրներ փայփայելու փոխարէն ընտրած էր տնտեսական եւ ճարտարագիտական ոլորտներու մէջ գարգանալու տարբերակը՝ հասնելու գարգացման այնպիսի դիրք ունեցող երկրի մը, որուն հետ հաշուի չենտիր ճակարակի պիտի ըլլար բնականաբար: Այդպէս ալ եղաւ: Չինաստան դարձաւ տնտեսական եւ ճարտարարուեստի ոլորտներուն մէջ գերգարգացած ուժ: Այսօր, փաստօրէն, Չինաստանի մէջ կը գործեն աւելի քան ութը հազար ամերիկեան ընկերութիւններ, իսկ պսակազեի ժաիրին յաղթահարումն ու Չինաստանի այլ երկիրներու նկատմամբ մարդասիրական մօտեցումն ու օժանդակութիւնը այլ առաւելութիւններ ալ արձանագրեցին ի նպաստ այդ երկրին:

Ուրեմն կանխատեսելի կը թուի երկու մեծ ուժերուն կարճաժամկետ բախումը, ապա համաձայնութիւնը, որմէ ետք կ'ակնկալուի տընտեսական ծաղկումի նոր փուլ մը, որ կրնայ սկսիլ յատկապէս Միջին Արեւելքի շրջանէն, նկատի առած որ այդ շրջանն է ամենէն շատ տուժածն ու քանդուածը, միեւնոյն ատեն ամենէն հարուստը՝ հանքային ու հում նիւթերու պաշարներով:

Այս փուլին, ԱՄՆ Միջին Արեւելքի մէջ վերահսկող ուժ դառնալու, Ռուսիոյ եւ Իրանի դերակատարութիւնը սահմանափակելու համար բախումներու իսկ կրնայ ուղղուիլ:

Տագնապալի կարճ շրջան մը եւս կը նախատեսուի յառաջիկայ ամիսներուն, սակայն իւրաքանչիւր տագնապէ ելք որոնելն ու գայն օգտագործելն ալ պետութիւններու երկարաժամկետ ծրագիրներուն մաս պիտի կազմեն, նուազագոյն վնասներով եւ առիթներու առաւելագոյն օգտագործումով դուրս գալու միաբեկեռ, լիպերալ աշխարհի քայքայման այս փուլէն:

Միւս կողմէ ծաւալապաշտ երկիրներ կրնան օգտագործել միջազգային ատեններու գերլարուած այս վիճակը եւ նոր տարածքներ գրաւելու նկրտումներ ունենալ: Ե՛ւ Սուրիոյ, ե՛ւ Հայաստանի պարագային հարեւան երկիրներու նկրտումները կրնան նոր յարձակումներու առաջնորդել:

Ու որքան ամուր մնան այս երկու երկիրներուն պաշտպանութեան համակարգերը, այնքան կարելի կ'ըլլայ ամրագրել անոնց սահմաններուն անվտանգութիւնը:

«Գ.»

«ՔՐԻՍՏՈՍ...»

Սկիզբ՝ էջ 1

մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս» (Հո 14.9):

Գ. Հաւատքի առաւօտ է: Այն առաւօտը, երբ կիները փութացին գերեզման եւ իրենց կենդանի աչքերով տեսան դատարկ քարայրը, ուր միայն Յիսուսի պատանքը կար եւ վկայեցին, որ գերեզմանը թափուր է եւ որ Տէրը հոն չէ, այլ յարութիւն առած է:

Դ. Հաւատքի կենդանութեան առաւօտ է: Կեանքի եւ յարութեան ըղձանքով եւ հաւատքի կենդանութեան նոյն ապրումներով կ'ողջունենք յարուցեալ Քրիստոսը: Հաւատքի մեր կեանքին անցեալը, ներկան ու ապագան բնորոշող երեք գլխաւոր փուլերը վերաքննելու համար Պօղոս առաքեալի դիտարկումով պէտք է մտաբերենք, որ Քրիստոս մեռաւ մեր բոլորին համար, որպէսզի հաւատքով կենդանացողները այլեւս չապրին իրենց իրենց համար, այլ Անոր համար, որ իրենց փոխարէն մեռաւ եւ յարութիւն առաւ (Բ. Կր 5.15):

Քրիստոսի յարութիւնը հոգեւոր յարութիւն է, որ կը վերանորոգէ մարդուն ներաշխարհը, զինք վերածելով նոր արարածի: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ո՛րքէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է» (Բ. Կր 5.17): Նորոգուած մարդուն պարտականութիւնն է քարոզել գօրութիւնը, մեծութիւնն ու փառքը Անոր, որ մեզ խաւարէն Իր սքանչելի յաւիտենական լոյսին կանչեց (Ա. Պտ 2.9):

Սակայն, նոր արարած դարձած մարդը պէտք չէ ապրի ինքն իր անձին համար, այլ՝ Տիրոջ համար (Հո 14.7-8): Առաքեալին այս հաստատումը կարեւոր ճշմարտութիւն մը կը փոխանցէ մեզի, թէ եսասիրութիւնը եւ Քրիստոսի հաւատքը իրարու չհամընկնող իրականութիւններ են: Քրիստոս եկաւ մարդը ազատելու մեղքի կապանքէն, որ այս պարագային եսասիրութիւնն է:

Մենք, որպէս Յիսուսի հետեւորդներ, աշխարհի հոգեւոր ծանրաբեռնուած ենք: Առօրեայ հազար ու մէկ անլուծելի հարցեր կը մտահոգեն մեզ, չիրականացած մեր ծրագիրներով, երազներով եւ մեր բոլոր տկարութիւններով: Թող որ հաւատք եւ վստահութիւն ունենանք նոր արշալոյսներ դիմաւորելու: Յարութեան գօրութեամբ գօտեպնդուիմք եւ դէպի առաջ նայիմք:

Անուրանալի ճշմարտութիւն է, որ աշխարհի սկիզբէն համաճարակներ եւ անդամանելի հիւանդութիւններ սպառնացած են մարդկութեան եւ շատերու կեանքը խլած: Դարերու ընթացքին գիտնականներ շատ մը մահացու հիւանդութիւններու դարմանը գտած են եւ պատուաստներու շնորհիւ անոնք կանխած են մարդոց մահը, սակայն միշտ նոր ախտեր ի յայտ եկած են եւ ամենուրեք մահուան արհաւիրքը գուժած: Գիտնականներ, պետութիւններ, ազգեր հսկայ գումարներ կը տրամադրեն հետագօտութիւններ կատարելու համար եւ արդիական սարքաւորումներով հետեւողական եւ մնայուն պայքար կը մղեն մահացու՝ աներեւոյթ ժաիրերու դէմ: Այս օրերուն մահացու գլխաւոր ժաիրը պսակազեի ժաիրն է, փոքր ժաիր մը, որ աշխարհի համայն մարդկութիւնը ահուդողի մատնեց եւ հազարաւոր կեանքեր խլեց:

Յարութեան տօնին առիթով, բոլորս մեր տուններուն մէջ առանձնացած, Սաղմուտագուին հետեւեալ բառերը միաբերան յայտարարելով ըսենք. «Տիրոջ գործերը պիտի յիշեն, բոլոր գործերուդ մասին պիտի խորհիմ եւ քու ջրածներուդ մասին պիտի պատմեն» (Սղ 72.11-12):

Աղօթենք առ Աստուած, որպէսզի յաղթանակներով լեցուն նոր սկիզբ մը բանայ մարդկութեան առջեւ, լեցուն նուաճումներով եւ յաջողութիւններով, այն վստահութեամբ, որ մեր երկնաւոր Հայրը պիտի լսէ մեր ձայնը:

Յարութեան հաւատքին շնորհիւ է, որ հայ ժողովուրդը իր դարաւոր պատմութեան ընթացքին, յատկապէս Հայոց Ցեղասպանութեան օրերուն, յաղթահարելով իր գոյութեան սպառնացող բոլոր վտանգները կրցաւ կրկին ոտքի կանգնիլ:

Վստահ ըլլանք որպէս քրիստոնեայ ժողովուրդ, որ մեր «վաղը»-ը պիտի նմանի մեր առջեւ բացուած յարութեան դրան: Կեանքի այդ դուռը մեզի պիտի առաջնորդէ դէպի կեանքի պարտեզ, դէպի երջանկութիւն, ուր պիտի լսենք Արարիչին ձայնը, որ Աստուածաշունչին ընդմէջէն կ'ըսէ մեզի այսօր. «Մի՛ վախնաք, ես աշխարհին յաղթեցի: Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի»:

Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Յարութեան տօնին առիթով, Բերիոյ Հայոց Թեմի անունով մեր որդիական սերն ու երախտագիտութիւնը կը յայտնենք ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, մաղթելով քաջամոռոյցութիւն եւ անսպառ կորով, յառաջ տանելու Հայ Եկեղեցւոյ նուիրական առաքելութիւնը: Մեր շնորհաւորութիւնները կ'ուղղենք թեմէն ներս գործող Ազգ. Երեսփոխանական Ժողովին, Ազգ. Վարչութեան, Կրօնական Ժողովին եւ մեր բոլոր կառույցներուն, միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ բարեպաշտ ժողովուրդին, մաղթելով անվտանգ, պայծառ օրեր:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

ԿԵՅՈՒԾԸ

ՔԱՆԱՏԱ ՊԵՏՔ Է ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՏԱՅ, ՆԱԵՒ՝ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԷ ԹՈՒՐԵՈՅ ՄԵՋ ԻՐ ԴԵՍՊՈՆԸ



Ս. Մահսեդեան

Արցախի մեջ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները խժալուր արձագանգներ ստեղծեցին արեւմտեան որոշ շրջանակներու մէջ. Եւրոպական Միութեան արտայայտած՝ որոշ չափով զգուշաւոր ու վերապահ անբաւարարութենէն ետք, Թուրքիոյ մէջ Բանատայի դեսպանը քանի մը քայլ անդին գնաց եւ յայտարարեց, որ «Քանատա չի ճանչնար այսպէս կոչուած՝ ընտրութիւնները», զանոնք կը նկատէ «ԵԱՀԿի Միսակի խմբակին խաղաղարար ճիգերուն վնաս բերող», ու անելին՝ յայտարարեց, որ իր երկիրը «աջակից է Ատրպէյճանի հողերուն ամբողջականութեան»:

Չենք ուզեր երկար կանգ առնել այն բանամթերքին առջեւ, որ կը կամիջէ թրքական, ազերիական, քանատական, Եւրոմիութեան եւ այլ արձագանգներ. Տարբեր տեղերէ նոյն՝ «այսպէս կոչուած ընտրութիւններ» արտայայտութիւնը բաւական բացատրող է... Այլ կ'ուզենք քանի մը քայլ յառաջ անցնիլ Բանատայի Հայ Դատի յանձնախումբի պահանջէն, ըստ որուն՝ այս կեցուածքը անընդունելի է եւ կը սպառնա, որ անիկա չեղեալ համարուի:

Հիմնուելով ընդհանրապէս հայութեան իրաւունքներուն եւ մասնաւորաբար Յեղասպանութիւնը ճանչցած ըլլալու Բանատայի արդարամիտ կեցուածքին վրայ, մեզի համար անբացատրելի է Դեսպանատան այս յայտարարութիւնը, հետեւաբար, առաջին հերթին, կը սպասենք, որ Բանատա ո՛չ միայն յետո կոչէ այս արտայայտութիւնը (որ լոյս աշխարհ եկաւ «Ճլուրլուն»՝ Tweeter-ի ճամբով), այլ նաեւ Հայաստանին, Արցախին եւ ամբողջ հայութեան բացատրութիւն տայ անոր մասին, օրինակ՝ ըսէ, որ դեսպանը ինքնազուլու կատարած է այս յայտարարութիւնը, եւ եթէ այդպէս է, չեղեալ համարէ զայն ու դեսպանը պաշտօնազրկէ:

Այո՛. պետք է պահանջել դեսպանին պաշտօնազրկումը, ինչ որ մասամբ պիտի դարմանէ դիւանագիտական-քաղաքական այս կաֆը, որ ի վերջոյ նոյնիսկ Բանատային է:

Միջանկեալ՝ ծանօթանանք դեսպանին: Կը կոչուի ճամբաւոր Խոխար (մեզ այդքան ալ չի հետաքրքրեր թէ այս անունը ինչպիսի՞ ծագումի կը տանի դիւանագէտը): այս պաշտօնակից կոչուած է այս տարուան Յունուարի սկիզբը: Բանատայի դիւանագիտական անձնակազմին միացած է 1986-ին, զանազան պաշտօններ վարած է լատին ամերիկեան երկիրներու մէջ, գործած է նաեւ Ռուսիայի մէջ, որամատնաւորին միջազգային ասպարէզ, 2010-էն 15 պաշտօնավարած է Պրագայի մէջ, իսկ այս պաշտօնին կոչուելէ առաջ, եղած է Սան Տիեկոյի մտա-

կայ Լա Յոյա քաղաքին մէջ կեդրոն ունեցող՝ Ամերիկաներու Հիմնարկութեան վարիչ կազմի անդամ...

Այսքանը բաւարար տեղեկութիւն է, որոշ գաղափար մը կազմելու անոր վաստակին մասին, տեսնելու՝ որ ան նորեւիկ դիւանագէտ մը չէ: Սա նաեւ ինքնաբերաբար կ'ենթադրէ, որ Խոխար պետք է բաւական ծանօթ ըլլար պատմութեան, նման հրապարակում ընելէ առաջ՝ սերտած ըլլար Արցախի



տագնապին պատմութիւնը, ծանօթացած ըլլար ծալքերուն, որպէսզի հալած իւրի պէս կուլ չտար թրքազերիական մեկնաբանութիւնն ու կեցուածքը, առ նուազն՝ ծանօթացած ըլլար, թէ Արցախը ո՛չ մէկ ատեն մաս կազմած է Ատրպէյճանին, որուն «հողերուն ամբողջականութեան» պահպանումին ախոյեանի պատմութեանով հանդէս կու գայ ինք:

Աւելորդ կը նկատենք հոս երկար-բարակ պատմութիւնը ընելու հայկական Արցախը Ատրպէյճանին նուիրելու ստալինեան «հնարք»ին ու անոր հետեւած զարգացումներուն, որոնց անարդարութիւնը փաստուած է ու վերահաստատուած՝ վերջին տասնամեակներուն: Աւելորդ է նաեւ հարց տալը, թէ Թուրքիոյ մէջ Բանատայի դեսպանին ի՞նչ գործն է կամ իրաւասութիւնը՝ նման կարծիք յայտնելու, կարծիք՝ որ պարզ ապէս կ'ապացուցէ հարցին եութեան ու ծալքերուն անտեղեակ ըլլալը եւ թրքական ներշնչումէ տարուած ըլլալը: Սա արդէն զինք ու իր երկիրը, կառավարութիւնը կը դասէ Արցախի, հետեւաբար նաեւ հայութեան հանդէպ անարդարութիւն ընողներուն շարքին: Եւ թող ո՛չ ոք ինքնապաշտպանութեան փորձ ընէ, թէ նման կեցուածք կը բխի Միսակի խմբակին ճիգերուն գործվիզ ըլլալու մտեցումէն...

Բանատայի իշխանութենէն հայութեան սպասած բացատրութիւնը եւ մասնաւորաբար դեսպանին պաշտօնազրկման պահանջը նկատի ունի այն հաւանականութիւնը, որ դեսպանը ինքնազուլու կերպով կեցուածք արտայայտած է

կամ կաշառուած՝ թուրքերէն: Վերջին տարիներուն, մէկէ անելի դիւանագէտներու ու քաղաքական գործիչներու՝ նման կաշառքներու թակարդը ինչպիսի փաստերը աղակալող եղան. Եւրոպայի խորհրդարանի անդամներ ալ բռնուեցան «կարմիր ձեռքերով», ու փաստուեցաւ, որ ազերիական կաշառքը ազդեցութիւն ունեցած է անոնց վարմունքին վրայ: Այս պահանջները նաեւ պետք չէ դիտել իբրեւ միամտութիւն՝ Բանատայի քաղաքական վարքագիծին, այլ մեր դատողութիւնը կը հիմնուի նոյնիսկ Բանատայի նախընթաց ուղղամիտ կեցուածքներուն վրայ: Պարզ օրինակներ էին Յեղասպանութեան ճանաչումը եւ այդ առիթով Թուրքիոյ հետ պաղտութիւնը, նաեւ չենք մոռցած, որ ՆԱԹՕ-ի անդամ Բանատան էր որ

քանի մը ամիս առաջ, իր ուժերը քաշէց Սուրիա առաքուած ՆԱԹՕ-ի ուժերէն եւ իրողապէս հակադրուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահին որդեգրած կեցուածքին, երբ ականատես եղաւ քիւրտերուն դէմ երտողանեան յարձակողականին եւ անհակաշիռ սպանդներուն: Ո՛չ ոքի համար նախընտրելի է Բանատայի նման երկիր մը տեսնել այն երկիրներուն շարքին, որոնք Հայ Դատի Կեդրոնական խորհուրդին բնորոշումով՝ կը դաւաճանեն իրենց իսկ դաւանած ժողովրդավարական արժէքներուն...

Հարցին կը մօտենանք, պետք է մօտենալ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ու այս պարագային՝ հայութեան եւ Արցախի մարդկային-ազգային իրաւունքներուն դիտանկիւնէն: Դեսպանն ու իրեն պէս մտածող-դիքաւորողները արդեօք լուր չունին, որ Թուրքիոյ եղբայր ու սերտ դաշնակից հռչակուած Ատրպէյճանը ամէն օր կը խախտէ իր իսկ կողմէ ընդունուած

զինադադարը, կրակոցներով ու յաճախակի ռմբակոծումներով կ'ահաբեկէ, այսինքն՝ պետական ահաբեկչութիւն կը գործադրէ Հայաստանի ու Արցախի սահմանային շրջաններու բնակչութեան, պաշտօնական զինեալ ուժերուն դէմ: Եւ երեւակայել, որ դեսպանին յայտարարութիւնը կը զուգահայտէ Բառօրեայ Պատերազմին չորրորդ տարեդարձի օրերուն...: Այսպիսիներ արդեօք իրենց միտքէն անցուցած են դատապարտել այդ ոճրային արարքները, որոնց շարքին՝ Սումկայիթն ու հայ սպայի մը վայրագ սպանութիւնը, կամ՝ հարց տալ, թէ Արցախը ինչո՞ւ տասնամեակներ առաջ, խորհրդային տարիներուն՝ իսկ ծառացաւ Ատրպէյճանի իշխանութեան դէմ, որովհետեւ շրջանի հայութեան տարրական իրաւունքները ամէն օր կ'ոտնակոխուէին եւ Արցախը կը մատնուէր հայաթափումի: Եթէ իրենք ըլլային արցախցիներուն տեղը, ի՞նչ պիտի ընէին, ի՞նչ պիտի ընէին այսօր...

Կրկնենք. աչքի առջեւ ունենալով Բանատայի իշխանութիւններուն ընդհանրապէս արդարատեսչ եւ արդարադատ ընթացքը, հայութիւնը այսօր իրաւունք ունի բացատրութիւն պահանջելու դեսպանին յայտարարութեան մասին, պահանջելու՝ որ ան պաշտօնազրկուի, որպէսզի նախընթաց չստեղծուի, նաեւ՝ ուղեցոյց ծառայէ այլոց: Սա պետք չէ դիտել իբրեւ անուղղակի հակադարձութիւն՝ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպաններէն՝ Էլզնիկի պաշտօնազրկման, որ, ինչպէս ծանօթ է, տեղի ունեցաւ անարդար մօտեցումի հետեւանքով:

Ամենէն կարեւորը: Այս պահանջին հետապնդումը պետք չէ թողուլ միայն Հայ Դատի ծառայողներուն ուսերուն, որովհետեւ սա ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ գործ է եւ պետք է ներգրաւէ եւ միացնէ Հայաստանի, Արցախի իշխանութեանց եւ սփիւռքներուն ձեռքերը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ...

Սկիզբ՝ էջ 6

քական Կատակերգութիւն» խորագիրը:

Դիտելով անոր ծաղրանկարները, վերջապէս դժուր ալ պիտի հաստատեք, որ ինչքան այժմեական են Սարուխանին գաղափարները, պիտի տեսնեք, թէ ինչքան երկար տառապած է ան իր իսկական կոչումին՝ արուեստին հասնելու համար:

Ան միշտ ընտրած է իր իսկական կոչումը՝ իր աստուածաշնորհ տաղանդը, իր միակ եւ անփոխարինելի սերը՝ իր արուեստը:

Սարուխան պարզօրէն հաստատած է ինչ որ հիմա այս օրերուն կը կրկնուի. «Հետեւէ՛ Կիրքիդ» (follow your passion):

Ան կ'ըսէր. «Տաղանդը լաւ բան է, բայց կիրարկուած ճիւղին հանդէպ կիրքը անելի լաւ է: Կարելի է ըսել, որ լաւ է նուազ տաղանդ ունենալ, բայց սեր ու կիրք ունենալ գործին հանդէպ, քան մեծ տաղանդ ունենալ, բայց չսիրել ճիւղը»:

«Ազատ ասպարէզի մարդ եմ: Ընդհէ՛, մեծ հարստութեան չտիրացայ, բայց իմ աչքին՝ ազատութիւնը հազարներու արժէք ունի»:

Սարուխանի կեանքին նպատակն էր շուրջիններուն ժպիտ բաշխել:

29 Դեկտեմբեր 2006-ին Եգիպտոսի մայրաքաղաքի կառավարչին հրամանագրով, որոշուած է քաղաքի փողոցներէն մէկը անուանակոչել հայ մեծանուն երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի անունով, իբրեւ երախտագիտական արտայայտութիւն եգիպտական երգիծանկարչութեան մէջ իր ներդրած նշանակալի ասանդին:

Սարուխան օժտուած է արատները, շողորթութիւնը, մարդկային կեղծ ժպիտները անողքաբար վեր հանելու եւ զանոնք դաժան ծաղրի ենթարկելու արտասովոր ունակութեամբ: Միւս կողմէ՝ նոյնիսկ ամենասովորական դէպքերն ու գործողութիւնները անոր մատիտին տակ կը դառնան ծայր աստիճան գուարճալի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ



Յովիկ Ղազարեան

Ժամանակակից քաղաքակա- նութեան ծիրէն ներս կան գանազան քաղաքականացուած տնտեսական եւ ընկերային վերնագիրներ, որոնք ընտրապայքարներու ու քաղաքա- կան արշաւներու ընթացքին խաղա- քարտերու կը վերածուին ղեկավար խաւին կողմէ: Այդ վերնագիրներէն են, օրինակի համար, գաղթական- ներու տագնապը, որուն ազդեցու- թիւնը սաստկացաւ սուրիական տագնապէն ետք եւ հասաւ Եւրո- պայէն մինչեւ Ամերիկաներ ու Աւստրալիա, ինչպէս նաեւ կառա- վարութիւններու պիտոճեական քա- ղաքականութիւնները եւ ընկերային ապահովագրական ծրագիրները, որոնք մեծ դեր կը խաղան ընտրա- կան պայքարներու մէջ շահելու տա- րեց եւ կարիքաւոր խաւերու քուէները, յատկապէս Արեւմուտքի ալեհեր

լու այս բոլորը, տնտեսական այս տուեալները ամբողջովին շրջուե- ցան եւ պատմականօրէն աննախա- դէպ բարձրունքներէն ինկան աննա- խաղէպ անդունդներու մէջ իրենց հետ տապալելով Թրամփին ընտրա- կան ռազմավարութիւնը: Այսպիսով Թրամփի ստիպուած է գտնել այլընտրանքներ: Շատ հաւանական է, որ անոր ընտրապայքարին տր առանցքը կազմէ հակա-Չինաստան քաղաքականութիւնը եւ որպէս իր նախագահութեան չորս տարիներու մեծագոյն նուաճում ներկայացնէ Չինաստանի հետ առեւտուրի նոր համաձայնագիրը: Այս ռազմավա- րութիւնը, սակայն, տնտեսականին պէս կայուն հիմքեր չունի եւ ամե- ռիկացի քուէարկողը կը դնէ ծանր այլընտրանքներու դիմաց: Յակա- ռակ կողմը՝ Դեմոկրատ կուսակցու- րեան երկու թեկնածուներէն մէկը ընկերավարական հակումներ ունի, ինչ որ Միաց- տալ Նահանգներուն մէջ հերե- տիկութիւն կը համարուի: Սակայն Թրամփին ժախարային ճախող քաղաքականութիւնը առաւել եւս նուազեցու- ցին անոր ժողովրդականու- թիւնը եւ այսօր երկրէն ներս սկանտինաւեան երկիրներու ընկերավարական տարբերակը հետզհետէ ընդունելութիւն



ընկերութիւններուն մէջ: Յիշեալ գործօնները իրարու օղակուած են եւ անոնց ամբողջականութիւնը, իր դրական ու բացասական դրսեւո- րումներով կը ներկայացնէ այս- օրուան քաղաքակրթութիւնը: Վերջին ամիսներուն անոնց եկաւ միանալու ժախարային քաղաքականութիւնը: Աստղագուշակ ըլլալու չէինք կակխատեւելու համար, որ 2020-ը փոփոխութիւններու տարի պիտի ըլլար, որովհետեւ արդարացիօրէն կարելի էր գայն անուանել ընտրու- թիւններու տարի, սկսեալ ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւննե- րէն, մինչեւ Մեծն Բրիտանիոյ ԵՄ-էն պաշտօնապէս դուրս գալը, հաս- նելով մինչեւ Սուրիոյ եւ Իրանի խորհրդարանական ընտրութիւնները, ինչպէս նաեւ Ռուսիոյ եւ Յայաս- տանի սահմանադրական հանրա- քուէները: Այլ խօսքով՝ այս տարի չկայ երկիր մը, ուր քաղաքացիները պիտի չուզուին ղեկի քուէատու- փեր, իրենց ծայրով կատարելու ճա- կատագրական փոփոխութիւններ իրենց երկիրներուն մէջ: Միացեալ Նահանգներու 2020-ի նախագահական ընտրապայքար- ներուն առանցքը կը կազմեն տնտե- սական նուաճումները, գորս Թրամփի կը վերագրէ իր որոշումնե- րուն ու իր վարչակազմին: Նախոր- դի յիշեցիք արձանագրուած յա- ռաջխաղացները՝ անգործութեան վերացում եւ սակարանի հիմնական ցուցանիշներու (ինչպէս Dow 30 index) աննախադէպ բարձրացում: Պսակածե ժախրը եկաւ խանգարե-

կը գտնէ: Թերեւս ան յաջողի երկիրը դուրս բերել տասը տարին անգամ մը կրկնուող տնտեսական տագ- նապներու համակարգէն: Եւրոպայի մէջ, տարեցը, որ ամ- բողջ կեանքը տուրքեր վճարած է կառավարութեան՝ ի հաշիւ ապա- գայի առողջապահական ապահո- վութեան, այսօր՝ իբր պսակածե ժախրէն ամենէն աւելի վտանգուած տարր, կը բացայայտէ, որ իր երկրի հիւանդանոցներուն մէջ զինք ընդու- նող անկողին մը չկայ ահագանգա- յին այս ժամուն: Այս մէկուն պատ- ճառով եւրոպացի քաղաքացին, տարեց թէ երիտասարդ, իր երկրի տիրող համակարգին վրայ վստա- հութիւնը սկսած է կորսնցնել: Նման պայմաններու լոյսին տակ, եւրոպա- ցին կը հակի դէպի ազգային ծայ- րայեղական կուսակցութիւններ, որոնք միշտ վարած են նուազագոյն տուրքերու քաղաքականութիւն, երեւոյթ մը, որ ունի իր արմատները Եւրոպայի քաղաքականութեան մէջ նոյնիսկ պսակածե ժախրի տա- րածումէն առաջ: Վկայ Աւստրիոյ վերջին ընտրութիւնները 2017-ին, որոնցմէ ետք երկրի ղեկավարութեան մաս սկսաւ կազմել ծայրայեղ աջա- կողմեան կուսակցութիւն մը: Այս բոլորին վրայ կու գայ աւելնալու Թուրքիոյ լկտի քաղաքականութիւնը գաղթականներու հոսքը օգտագոր- ծելու իբր Եւրոպայի դէմ գէնք եւ քա- ղաքական ճնշումի խաղաքարտ, ինչ որ առաւել կը մղէ եւրպացի քուէարկողը ուղղուելու դէպի ազգա- յին աջակողմեան կուսակցութիւն-

Թուրքիոյ նուրջ

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀՈՂԵՐ ԲՈՆԱԳՐԱՌՂԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՏԵՐ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՀԱՍԻՉԻԻ ՏԱՅՐԱՄԱՆԵՐԸ

Չորեքշաբթի, 8 Ապրիլ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական հողեր բռնագրուած թրքական ուժերը կը շարունակեն միջազգային օրէնքի խախտումները եւ սուրիական հողերու վրայ յարձակումը՝ ստեղծելով գինուորական նոր ռազմա- կան միաւորներ եւ ամ- րապնդելով իրենց դիրքերը Յասիչէի գիւղական շրջա- նին մէջ: Անոնք միեւնոյն ատեն կը կողոպտեն Ռաք- քայի հիւսիսային գիւղին մէջ ամբարուած ցորենի պահեստանոցները:



Քաղաքացիական աղբիւրներ յայտնած են, որ թրքական ուժերը գինեալ ուժեր կետ մը ունէին արդէն բռնագրուած Ռաս ուլ Այն քաղաքի հարաւային շրջանին մէջ, ներ- կայիս այդ կետը առաւել եւս կը գօրացնեն արդիական հրետանիով, իսկ ահաբեկչական խմբաւորումներու հետ գործակցելով անոնք կ'ամրապն- դեն Յասիչէ նահանգի հիւսիսային շրջանին մէջ իրենց գրուած դիրքերը, յատկապէս Թալ Թամր եւ Ապու Ռասին քաղաքներուն միջեւ ինկած տարա- ծութեան վրայ:

Նշեալ աղբիւրները անցնելով ըսին, որ թրքական ուժերը գրուած են գրաւեալ Ռաս ուլ Այնի դարպասէն արեւելքը գտնուող մօտաւորապէս 15 տոնում հողատարածք, գոր պիտի օգտագործեն որպէս առեւտրային փակ մաքսանենգութեան շրջան՝ թրքական ապրանքներուն ապօրինի վաճառ- քին համար:

Աղբիւրներուն համաձայն, թրքական ուժերը Ռաքքայէն գողցուած ցորենը կը փոխադրեն իրենց վերահսկողութեան տակ գտնուող հիւսիսային ծայրամասի Թէլ Ապիատ բռնագրուած քաղաքը:

ներ, որոնց իշխանութեան հասնիլը մեծագոյն վտանգ կը համարուի Եւրպական Միութեան գոյութեան:


Գանք պսակածե ժախրի ծնըն- դավայր՝ Չինաստան: Ան կը ջանայ այս տագնապը շահագործելով անցնել իր միջազգային քաղաքա- կան հասանելիութիւնը (global out- reach), օգտագործելով Միջազգա- յին Առողջապահական Կազմակեր- պութիւնը, տարածելու պսակածե ժախրի տարածման կանխարգի- ման իր տարբերակը, այս միջոցաւ պարտադրելով պետութիւններուն իրեն հետ համագործակցութիւնը, ինչու չէ նաեւ յանգանակ ար- տադրանք դեղորայքի օգտագոր- ծումը: Այս մէկը կը ստեղծէ այն տպաւորութիւնը, թէ Չինաստան պսակածե ժախրին դէմ պայքարի յառաջադէմ ուժ է, բայց իրականութեան մէջ անոր ժախրային ռազմա- վարութիւնը կը միտի կանխարգել ապագային իր դէմ ծաւալուելիք քարոզարշաւը, որ լուրջ վտանգի տակ կրնայ դնել Չինաստանի մի- ջազգային վարկը: Զարոգարշաւի նախնական նշանները գտանք վեր- ջերս ԱՄՆ վարչակազմի պնդումնե- րուն մէջ, ժախրը կոչելու «չինական ժախր» կամ «Ռեհանի ժախր», որուն պատճառով աշխարհի 20 գերպե- տութիւնները (G 20) վերջին գագաթ- նաժողովի աւարտին ճախողեցան միասնական բանաձեւով դուրս գալ:

ները մեծ անկում արձանագրեցին եւ բազմաթիւ միջին ու փոքր մա- կարդակի քարիւղի ամերիկեան ըն- կերութիւններ վտանգուեցան: Այս մէկը Ռուսիա կ'օգտագործէ որպէս Միացեալ Նահանգներուն դէմ քա- ղաքական ճնշում, վերացնելու հա- մար ամերիկեան պատժամիջոցները, յատկապէս ռուսական քարիւղի մեծագոյն ընկերութեան՝ Ռոստոնե- ֆին դէմ, որ պատասխանատու է ռուսական քարիւղի արտադրութեան 40 առ հարիւրին:

Արդարեւ 2020-ը փոփոխու- թիւններու տարի է, սակայն պսա- կածե ժախրին տարածումը չկան- խատեւում արեւելումներ ստեղ- ծեց, միջազգային քաղաքականու- թիւնը մղելով դէպի անորոշութիւն: Բազմաթիւ գերպետութիւններ եւ միջազգային քաղաքական ուժեր արդէն իսկ փակուողի առջեւ կը գտնուին եւ ստիպուած էին իջում- ներ կատարելու: Պսակածե ժախրը եկաւ քողարկելու այդ ընկրկումները եւ այդ պետութիւններուն տրա- մադրեց յարմար պատրուակ:


Պատմութեան ընթացքին բազ- մաթիւ համաճարակներ անցած են, սակայն այս առաջին անգամն է, որ մարդկութիւնը միակամ, նոյն միջոցներով նոյն մարտահրաւերին դէմ կը դնէ, ինչ որ կը նշանակէ թէ աշխարհը արդէն թեւակոխած է հա- մաշխարհայնացման փուլը, պսա- կածե ժախրին դէմ պայքարի դեկը յանձնելով միջազգային ոչ-կառա- վարական մարմինի մը՝ ՄԱԿ-ի Մի- ջազգային Առողջապահական Կազ- մակերպութեան, իշխանարկութեան: (Շար. 2 եւ վերջ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆ



Ուսումնասիրեց Չեփիու Պապիկյան-Աագեան

Ալեքսանդր Սարուխան (Սարուխանեան) Սփիւռքի ամենէն հռչակաւոր երգիծանկարիչներէն ու ծաղրանկարիչներէն մէկը եղած է, նաեւ համբաւաւոր դէմք մը՝ արաբական աշխարհին մէջ: Ծնած է Արտանուշ, Պաթումի նահանգ (այժմու Վրաստան), 1 Յոկտեմբեր 1898-ին: Երկու տարեկանին, ընտանիքին հետ



Ինքնանկար

փոխադրուած է Պաթում, ուր ետքը տարեկանին ռուսական դպրոց սկսած էլաւմարտել: 1909-ին Սարուխանի ընտանիքը փոխադրուած է Կ. Պոլիս: Ալեքսանդրն ու իր եղբայրը՝ Լեւոն, յաճախած են Վիեննայի Մխիթարեաններու վարժարանը: 1910-1912-ին երկու եղբայրները հրատարակած են ձեռագիր, չորս էջանի շաբաթաթերթ մը «Ղուղիկ» անունով: Լեւոն թերթի գրողն էր, իսկ Ալեքսանդր երգիծանկարիչը: Իրենց հորը ամենտարական ծրագիրներու ծախողութենէն ետք, Պաթում վերադառնալու որոշումին պատճառով անոնք ընդհատած են թերթի հրատարակութիւնը, եւ որդիները մնացած են Պոլիս՝ իրենց ուսումը շարունակելու: Եղբայրները Մեծ Եղեռնի օրերուն այրած են այդ հրատարակութիւնը՝ ապահովութեան նկատառումներով:

Վկայուելէ ետք՝ 1915-ին, Սարուխան եղբայրները ապաստան գտած են աստրիական հովանաւորութիւնը վայելող Մխիթարեան վարժարանին մէջ՝ իրենց ուսուցիչներով եւ խումբ մը աշակերտներով: Ուսման ընթացքին անոնք անգամ մը եւս թերթ հրատարակելու փորձի մը կը ձեռնարկեն, այս անգամ գիտական, մանկական եւ մշակութային նիւթեր պարունակող «Յայ Պատանի» 86-էջանի ձեռագիր ամսագիրի մը հրատարակութեան: Այստեղ Ալեքսանդր բնութեան եւ կենդանական աշխարհին վերաբերող նիւթերն ու պատմութեան ներկայացուցած էր ջրաներկով եւ գուտ դասական *ռեալիստական* ոճին համապատասխանող ձեւով: Որոշ նկարներու շրջակայ տարածութիւնը երիտասարդը նկարագրուած է տուեալ նիւթին վերաբերող տարրերով՝ անոնց շրջանա-

կածէ կամ կամարածէ դասաւորումով: Այդ միակ փորձն էր, երբ Սարուխան գիրքեր կամ ժողովածուներ ձեւաւորած է՝ էջերը զարդանախշերով նկարագրողով եղանակով: Ամսագիրին մէջ տեղ գտած նկարներէն ի յայտ կուգայ Ալեքսանդրի բնածին շնորհքը: Միաժամանակ հոն նախանշաններ կարելի էր գտնել անոր չձեւաւորուած նկարչաձեւին եւ ոճին բացայայտման ու մասնագիտական կատարելագործման անհրաժեշտութիւնը:

Մուտրոսի գինադադարէն ետք՝ 1918-ին, Ալ. Սարուխան իբրեւ ռուսերէնի, թրքերէնի ու գերմաներէնի թարգմանիչ աշխատած է անգլիական գործին հետ, եւ իբրեւ գրագիր՝ խանութի մը մէջ: Միաժամանակ ան սկսած է հրատարակել ծաղրանկարներ՝ հայ մամուլին մէջ, յատկապէս՝ «Կաւոռ» շաբաթաթերթին (1921-1922): 1922-ին Եւրոպա մեկնելով, յաջորդ երկու տարիներուն ուսանած է Վիեննայի Գեղարուեստից ակադեմիային մէջ:

1924-ին Եգիպտոս հաստատուելով, յաջորդ երկու տարիներուն՝ Սարուխան «Յայկական Սինեմա» երգիծաթերթը հրատարակած է: Գահիրէի մէջ 1927-ին իր գծագրութիւններուն ցուցահանդեսով առաջին անգամ կը ներկայանայ հանրութեան: Եգիպտացի լրագրող Մուհամմետ ալ Թապիին հանդիպելով, ան կը սկսի իր 50-ամեայ աշխատակցութիւնը եգիպտական մամուլին իբրեւ ծաղրանկարիչ՝ «Ռոզ ալ Իսուֆ» շաբաթաթերթին համար, որուն խմբագիրը ալ Թապին ինք էր: 1928-1934 տարիներուն շաբաթաթերթի կողքի գծագրիչն էր ան:

Իր ստեղծած «Ալ Մասրի Էֆենտի» (Եգիպտացի Էֆենտի) կերպարը



Ալ. Սարուխան եւ բեմադրիչ Վարդան Աճեմեան դէմ առ դէմ

Սարուխանի համբաւը ամրապնդած է: Սակայն, «Ռոզ ալ Իսուֆ» շաբաթաթերթի եւ անոր հիմնադիր Մուհամմետ ալ Թապիի միջեւ վիճաբանութեան մը հետեւանքով, 1934-ին Սարուխան թերթը լքած է ալ Թապիի հետ եւ մաս կազմած՝ անոր խմբագրութեամբ լոյս տեսնող «Ախտը Սաա» թերթի անձնակազմին:

1939-1942-ին հայ ծաղրանկարիչը հրատարակած է «Լա Զարաւան» ֆրանսերէն երգիծաթերթը, իսկ 1945-ին՝ «Այս Պատերազմը» գիրքը (ֆրանսերէն ու անգլերէն), որ անոր երգիծանքի լաւագոյն դրսեւորումը նկատուած է:

1946-ին ալ Թապի թերթը ծախած է «Ախպար ալ Եաոււմ» օրաթերթին, ուր Սարուխան անցած է աշխատանքի մինչեւ 1952, իսկ այնուհետեւ, կեանքի վերջին քսանհինգ տարիներուն, աշխատած է «Ախպար» օրաթերթին մէջ: Սարուխան նաեւ աշխատակցած է Եգիպտական օտարալեզու մամուլին, ինչպէս նաեւ «Արեւ» հայկական օրաթերթին: Երկարատեւ տարիներու իր աշխատանքին բերումով ապրած ու իր գործերով արտացոլացուցած է Եգիպտոսի քաղաքական աւելի քան յիսուն տարուան վերիվայրումները:

Այլ վայրերու շարքին, ցուցահանդեսներ ունեցած է Երեւանի (1968) եւ Մոսթրալի մէջ (1973):



Սարուխանի երգիծագրական-ծաղրանկարչական վաստակը կ'ընդգրկէ աւելի քան 40.000 գործ: Ան նաեւ աշխոյժ կերպով մասնակցած է Գահիրէի ազգային կեանքին: Յրատարակած է ծաղրանկարներու հայերէն հատորներ, ինչպէս՝ «Մենք Մեր Ակնոցով», «Տե՛ս Խօսքերդ» (1962), եւ «Մենք Յայերէն Չենք Գիտեր» թատերախաղը (1963): Անոր երգիծանկարները նկարագրուած են Երուսաղ Օստանի «Ընկեր Փանջուկի» (1938) եւ Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ»-ու (1962) վերահրատարակութիւնները: Անոնք օգտագործուած են այդ երկու գործերուն ճէք Անդրեսեանի անգլերէն թարգմանութիւններուն, ինչպէս

(2018): Մամուլի մէջ հրապարակուած իր յուշերը ամփոփուած են հատորի մը մէջ եւ լոյս տեսած Գահիրէ:

Հայաստանի Ազգային պատկերասրահին մէջ կը ցուցադրուին 14 ընկերական շարժումներ, «Մեծապատիւ Մուրացկանները» ու պատկերագրողները (9 պատկեր), «Մարդկային Կատակերգութիւն» շարքէն մէկ երգիծանկար եւ այլ աշխատանքներ:

«Մենք Յայերէն Չենք Գիտեր» կատակերգութիւնը 1963-ին բե-



մադրուեցաւ Հայաստանի պատկերասրահի թատրոնին կողմէ:

Սարուխան գրած է բազմաթիւ յօդուածներ ծաղրանկարչութեան եւ սփիւռքահայ կեանքի մասին:

Ըստ «Արմինըն Միորո-Սփեթթէթթ» շաբաթաթերթի, անոր ստեղծագործութիւններու մէկ այլ ցուցահանդեսը ներկայիս կը գտնուի Լիվըրպուլի (Անգլիա) «Տէթթ Մոտըրն» թանգարանին մէջ: Միջազգային երգիծանկարիչներու Կոմիտէի կողմէ «Երգիծանկարչութեան Նահապետ» տիտղոսին արժանացած տաղանդաւոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի ստեղծագործութիւններու վերջին ցուցահանդեսը Գահիրէի մէջ կը կրէր «Անցեալի



Կանխատեսումներու Արձագանգները» ընդհանուր խորագիրը: Այնուտեղ ներկայացուած էին 35 բնագիր գծանկարներ, որոնք կը պատկերացնէին Եգիպտոսի ներքին եւ արտաքին քաղաքականութեան մօտ 50 տարուան դեպքերը, որոնք այսօր ալ այժմեական են: Նախորդ ցուցահանդեսը, որուն ընթացքին ցուցադրուած էին 1930-1970 թուականներու աշխատանքները, կը կրէր «Քաղա-

Ծննդեան 125-ամեակին առիթով

ԳՐԱԳԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆԵՆ ՅԱՄԵՑՈՂ ՏԱՔՈՒԿ ԵՈՒՆՉ ՄԸ...



Լեոն Ծառոյեան

Սա պահուն հարցում մը կը չարչարեի իմ միտքը. - առաջին անգամ ե՞րբ էր՝ որ հանդիպեր էի Բենիամին Նուրիկեանի անունին: Բան մը կարողացեր էի իրմէ դպրոցական իմ տարիներուն:

Ինձի կը թուի թէ իբրեւ խարբերողի գիւղագիր՝ Համաստե՛ղն էր միայն, որ անհոգիներ էր մեզի, մեկէ անկէ կարգերու մէջ: Անոր «Չալոս», «Միջոս» ու «Երևիկ Այն Օրերուն»ը կարողացեր էինք դասարանին մէջ, մեր դասագիրքերէն, ուսուցիչներուն կողմէ տրուած մեկնաբանութիւններով հանդերձ:

Իսկ Նուրիկեանը...:

Կրնամ հաստատապէս յիշել, որ միջնակարգի Ը. կարգի հայերէնի մեր դասագիրքին մէջ կա՛ր Բ. Նուրիկեանը՝ իր կենսագրութեամբ, դիմանկարով եւ իր գործէն ընտրեալ նմոշով մը: Սակայն Հայաստան տպուած մեր այդ դասագիրքը («Հայ Գրականութիւն», 1969, յատուկ՝ սփիւռքի դպրոցներուն համար, արեւմտահայերէնով եւ դասական ուղղագրութեամբ) շատ ծաւալուն էր՝ հայերէնի մեր սահմանափակ դասագիրքներուն համար: Հոն տեղ գտած էին ՅԻՍՈՒՆ հեղինակներ: Մինչդէռ, կրթական լման տարեշրջանի մը ընթացքին՝ մենք հազի կրնայինք ծանօթանալ 10-12 հեղինակի: Ուստի, մեր ուսուցչուհին ստիպողաբար ընտրութիւններ կը կատարէր դասագիրքէն՝ ըստ իր հայեցողութեան, ականաջ դուրս թողնով բազմաթիւ գրողներ: Նուրիկեանն ալ մեկն էր այդ անբախտներէն...:

Սակայն ես, որ բնաւ չէի ուզեր սահմանափակուիլ ուսուցչուհիին անհոգի ԵՐՈՎ, շարունակ կը պրպտէի նարնջագոյն քարտէս կողքով մեր այդ դասագիրքին բոլոր էջերը: Կանգ կ'առնէի ծանօթանալու հեղինակներուն դիմանկարներուն առջեւ, կը ստուգէի անոնց ծննդեան ու մահուան թուականները, հոսկէ-հոնկէ ընթերցումներ կը կատարէի:

Իմ այդ թերթատումներուն ընթացքին էր, որ մը, աչք-աչքի եկայ Բենիամին Նուրիկեանին հետ: Նուրբ դիմագիծերով անձ մը: Չարմանքով ու քիչ մըն ալ ապշահար՝ կարողացի անոր կենսագրութեան կից գետեղուած կարճ պատմութիւնը, որ կը կրէր շատ տարօրինակ վերնագիր մը՝ «Կովին Գլուխը»...:

Տարիներ յետոյ, պիտի անդրադառնայի որ Յ. Օշական եւս, Երուսաղէմ տպուած իր «Հայ Գրականութիւն» հաստատվոր դասագրքին մէջ հիւրընկալէր էր Նուրիկեանը՝ նոյն այդ «Կովին Գլուխը» պատմութիւնով:

Միայն թէ հարց մը կար, որ առաջին րոպէն գրաւեր էր իմ ուշադրութիւնը. - ինչո՞ւ Նուրիկեան նախընտրէր էր գործածել «կովին» հոլովածելը՝ փոխան «կովուն»ի: Զէ՞ որ դպրոցի գրասենյակներուն վրայ կանխապէս սորվեցուցեր էին մեզի, թէ «կով» գոյականին սեռա-

կան-տրական հոլովը կը կազմուի «կովուն» ձեւով: Ուրե՞մն: Արդե՞օք բարբառային խօսելածն էր ատիկա:

Տարիներ անց, հիմա, գրադարանէս վար կ'առնեմ ահա նարնջագոյն կողքով դպրոցական մեր այդ երբեմնի դասագիրքը: Հին օրերուն պէս՝ կը դարձնեմ էջերը, կարտով կը նայիմ գրողներու լուսանկարներուն: Հո՞ն է Բենիամին Նուրիկեանը, հո՞ն է նաեւ... «Կովին Գլուխը»:

Դասագիրքս, շեշտելէ ետք՝ թէ Նուրիկեան կը նկատուի կարճ պատմութիւն ու նորավեպի վարպետներէն մեկը, կը շարունակեմ սա՛պէս. «Ան կը գրէ սեղմ, խտացած ոճով, չի ճապաղիր, խորքն է իրեն երկարաբանութիւնն ու ճոռոմ լեզուն: Կրելով ամերիկեան նորավեպի մեծագոյն վարպետ Օ. Հենրիի բարերար ազդեցութիւնը, ան հայ գրականութեան տուած է գեղեցիկ նորավեպերու շարք մը, որ պատիւ կը բերէ իրեն: Նուրիկեան խորապէս կը ճանչնայ խարբերողի շինականը, ծանօթ է անոր մտայնութեան ու հոգեբանութեան, անոր նիստ ու կացին, ստեղծած գրոյցներուն եւ անհոգութեանց, ու այդ հանգամանքը մեծապէս նպաստած է որ ան հայ գրականութեան տայ հիանալի պատմութիւններ ու նորավեպեր, որոնցմէ շատերը չենք կրնար առանց արցունքի եւ արիւնքի կարդալ»:

Արժեւորումը գերազանց է: «Արժան է իրաւ»:

Միջանկեալ դիտել տամ, թէ «նորավեպ» բառը, որ արեւմտահայ իրապաշտներու շրջանին (1880-1900) կը գործածուէր առատօրէն, ուրիշ բան չի նշանակէր՝ եթէ ոչ խտացեալ պատմութիւն մը, ուր գործողութիւնը կը թաւալի ու կը զարգանայ շատ արագ թափով, նիւթին բոլոր թելերը կեղտոնացնելով մե՛կ կետի վրայ:


Եթէ ի մի բերեմք Բենիամին Նուրիկեանի գրական ամբողջ վաստակը՝ իր երեք հատորներով, հոն պիտի նկատենք երկճիւղ ուղղութիւն մը:

Առաջին ուղղութիւնը գիւղագրութիւնն է, իրեն տարեկից գրչեղբոր՝ Համաստեղի հետեւողութեամբ:

Կարդացէ՛ք Նուրիկեանի «Այգեկութիւն»ը, որպէսզի ձեր դիմաց բացուի կանաչ-կապոյտ հորիզոնը Ծովագ Աշխարհին՝ գիւղական իր տոհմիկ բարքերով, կրօնական անհոգապաշտութեամբ, վարուցանով, այգեկութեամբ, թոնիրով, քահանայէն միջեւ մուրացիկ՝ շինական բարի տիպարներով, եւ այս վերջիններն ալ՝ իրենց մանր կամ մեծ հոգեբով, բարբառով եւ մասամբ նորին: Մէկ խօսքով՝ ձեր դիմաց ուրուագծուի արեւմտահայ կրօնուած գիւղը՝ իր անաղարտ նախնական-

նութեամբ եւ գունագեղ բնութեամբ: Կարդացէ՛ք, որպէսզի իւրաքանչիւր տողի վրայ զգաք գաւառի հոգին ու արեւին բուրմունքը: Հեղինակը գրականութեան բերած է վերջին փշուրները ժողովուրդի մը խաղաղ կեանքին, որ դիւային ծրագրով մը դատապարտուեցաւ անեացումի 1915-ին: Տեսակ մը «յետադարձ գրականութիւն»:

Նուրիկեան, եւ իրեն նման՝ Համաստեղ, Վահէ Հայկ կամ Սուրեն Մանուէլեան կրնայի՞ն պանդուխտ գրողի իրենց սրտին ու հոգիին մէջ ամրափակ պահել, թաքցնել հայրենի գիւղին միացող կարօտը: Անոնք իրենց կեանքին ամենէն թարմ եւ առոյգ շրջանը (մանկութիւն ու պատանեկութիւն) ապրած էին իրենց հայրենի կտուրին տակ: Ծննդավայ-



րին հողը, ջուրն ու մթնոլորտը իրենց ծնունդն ու արիւնին մէջ էր: Ուստի, պայթեցուցի՞ն իրենց հոգեյատակը նստած այդ կարօտը ու գայլ վերածեցին ԳԻՐԻ: Գաւառական գրականութիւնը այդպէ՛ս ստեղծուեցաւ Ամերիկայի մէջ:

Գաւառական գրականութեան հետեւողական մշակումով՝ Բ. Նուրիկեան ի մտի ունէր, հաւանաբար, այլ պարագայ մը եւս: Ան կը միտէր Ամերիկայի մեքենայացած կենսքին ու ապականած բարքերուն հակադրել իր գիւղին մաքուր մթնոլորտը եւ իր պարզունակ տիպարներուն մարդկայնութիւնը: Ուրե՞մն՝ իր գրականութիւնը ձգտումնաւոր էր նաեւ. իր մէջ կը պարփակէր ընկերադատարակական խորք մը: Աւանդապաշտ գրագետի մը տագնապանք էր ատիկա:

Երկրորդ ուղղութիւնը ամերիկահայ կամ ամերիկեան կեանքի սեւեռումն է:

Գաւառի տոհմիկ նիւթերը օր մը պիտի սպառէին անշուշտ: Գիտենք բոլորս ալ, որ սահող-գացող տարիներու բնական թաւալումով՝ հին կարօտները կոշկոռ կը կապեն, սրտերը կը թեթեւանան քիչ մը...:

Նուրիկեանի պարագային ալ այդպէս պատահեցաւ: Գիւղէն ու գաւառէն վերցուած համով նիւթերու կողքին՝ ան տպաւորիչ պատկերներ սկսաւ գծել ամերիկահայ ժամանակակից բազմագոյն կեանքէն, լուսարձակ բանալով թէ՛ ազգային եւ թէ՛ ընկերային մտահոգութիւններու վրայ: Վեր առաւ իր հերոսներուն նիստ ու կացը, վիշտը, կարօտն ու երագանքները: Իր տիպարները ընդհանրապէս նոյն բարի ու միամիտ մարդիկն էին, որոնք

պարզապէս միջավայր փոխեր էին, ճակատագրի բերումով՝ գաւառի խուլ անկիւններէն եկեր-հասեր էին Ամերիկա, իրենց բնորոշումով՝ «անուշ երկիր ազատութեան»...:

Ամերիկայի երկնքին տակ ի՞նչ պիտի ընէին այս հայ մարդիկը՝ պանդուխտ գեղջուկները: Բանուոր պիտի ըլլային: Իրենց երիտասարդութիւնը պիտի սպառէին գործարաններու ծուխին ու մուրին մէջ: Իրենց պարկեշտ նկարագիրը յաճախ պիտի բախէր դրամատիրութեան ու անկէ բխող տմարդի քաղաքակրթութեան մը կարծի իրականութիւններուն:

Նուրիկեան պիտի նկարագրէր այս բոլորը մի՛շտ կարեկից զգացումներով եւ մարդկայնութեամբ թաթաւուն մերձեցումով:

Զէ՛ք յիշէր իր «Մաշած Աւել» պատմութիւնը:

Նուրիկեանի ամենէն բախտաւոր գրութիւնն է ասիկա թերեւս, որովհետեւ վերածուած է դասական կտորի ու տեղ գտած՝ հայերէնի դասագիրքերու կամ գրողներու կենսագրութեանց նուիրուած հաւաքածոներու մէջ:

Նուրիկեան այստեղ կը խօսի Արեւմտահայաստանի մէկ գիւղէն Ամերիկա ինկած հայ մարդու մը մասին՝ Ակոբ աղբար, որ իբրեւ անելածու կ'աշխատի հսկայ գործատան մը մէջ: Պարտաճանաչ բանուոր մըն է ան: Աշխատանքի բոլոր ժամերուն, իր կլոր ձեռնասայլը առջեւ ձգած, անդադար կը շրջի երկարականի գործատան սրահներուն մէջ, կ'երթելուէն արտադրիչ մեքենաներուն միջեւ, կ'աւլէ ու կը մաքրէ գետիկները: Վկայ՝ իր մաշեցուցած անելներուն խուրճերը...:

Բայց դժգոհ է ան իր կեանքէն երկու պատճառով. նախ, «Ամերիկայի մալ (ապրանք) եղանք գացինք» կը կրկնէ շարունակ ու կ'երագէ իր հայրենի երկիրը, ապա՝ շատ վտիտ է իր շաքաթական աշխատավարձը, միայն ու միայն ինը տողու տասնմէկ սենթ...: Իր բառով՝ «Ժեր էջի պոչ, որ ո՛չ կ'երկնայ, ո՛չ ալ կը կարճնայ»:

Տարիներով Ակոբ աղբար այս գործը կ'ընէ, միեւնոյն աշխատավարձով: Բենիամին Նուրիկեան նկատել կու տայ որ ան «այնչափ կ'աւլէ ու կ'աւլէ, որ գործարանին տախտակամածն իսկ կը մաշի»:

Սակայն, տարիներու ու տասնամեակներու երկայնքին կը մաշի ի՛նք եւս՝ Ակոբ աղբարը: Կը տկարանայ, մագեր կը ճերմկին, ականջը կը ծանրանայ, ուսերը կը ծրին: Մէկ խօսքով՝ կը ճերմանայ: Ու տխուր օր մը, գործատան վերակացուն զինք կանչելով կ'ըսէ.

- Վաղուրն սկսեալ, շատ կը ցաւիմ ըսելու որ ա՛լ պետք պիտի չունենանք քու աշխատանքիդ: Երթաս բարով:

Ու Ակոբ աղբար կը հեռանայ աշխատավայրէն գլխահակ, ինքզինք նմանցնելով ՄԱՃԱՃ ԱԵԼԻ ՄԸ, որ մէկդի կը նետուի՝ տեղը թարմ հատ մը աննելու համար...:

Ահա՛ մարդուն տմարդութիւնը մարդուն հանդէպ: Տմարդութիւն մը, որ «շահագործում» է «անարդարութիւն» անուններով ծանօթ է ընկերային ու տնտեսական աշխարհին մէջ...:

(Ծարունակէի - 3)

ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՎ Է ԳԵՂԵՑԻԿ



Ռիթա Կաղեան-Տիրապետան

Շենքին մեջ տաղտուկ կար: Պսակածե ժահրին կամաւոր բանտարկեալները որոշած էին վերջ տալ իրենց տնային կալանքին:

-Ինը տարի պատերազմական օրեր ապրեցանք, այսքան երկար տան մեջ չբանտարկուեցանք: Ամեն ամառու երեսս կը խաչակնքէի, գործի կ'երթայի,- կ'ըսէր Գեորգ:

-Բոլորս նոյնն էինք, Գեորգ, գործէն վերջ ալ ակումբ կ'երթայինք: Յիմա ո՛չ գործ, ո՛չ ալ ակումբ. կնիկի

կերտներս կարօտ... Խօսքը չկրցաւ ամբողջացնել օրը. Արփին:

-Մենք ասկէ աւելի դժուար օրեր ապրեցանք, մի՛ յուսահատիք, Աստուած ողորմած է:

Եկէ՛ք ամեն երեկոյ մեկու մը տան մեջ հաւաքուինք ու միասին հաճելի ժամեր անցընենք,- խանդավառ ու եռանդուն Մարալն էր խօսողը:

-Հա՛, հաճելի ժամեր անցընենք՝ վերջն ալ «փուշման» ըլլանք... Չէ՛, աղջիկս, չէ, ես վաթսուն տարեկան կին եմ, ճնշում ունիմ, շաքար ունիմ, սիրտ ունիմ, ամեն ինչ ունիմ բացի քորոնայէն: Ե՛, այդ քորոնան ալ պակաս թող մնայ, աչքը «քորանայ» ալ հեռու մնայ մեզմէ:

-Ես ուրիշ առաջարկ մը ունիմ. մեր շենքին տանիքը բաւական ընդարձակ է, մաքրենք, դասաւորենք, հոն հաւաքուինք:

-Ի՞նչ տարբերութիւն տան մեջ կամ տանիքը, նոյն բանն է: Եթէ կ'ուզենք անվտանգ մնալ, պետք չէ համախմբուիլ: Այս տարի տօնական օրերը այսպէս պիտի դիմաւորենք, աւելի լաւ է զգոյշ ըլլանք՝ փոխանակ վերջը զոյջակք: Զիչ մը ես համբերենք, վտանգը թող անցնի ու մենք կրկին վայելենք բարի դրացիութեան վրայ հիմնուած մեր յարաբերութիւնները: Ըլլանք զգոյշ ու խոհեմ, միշտ ապակիներով Աստուծոյ,- տիկին Չուարթին խօսքերը համոզիչ ու տպաւորիչ էին:

-Այս օրերը կ'անցնին, առաջին անգամ մեր տան մեջ կը հաւաքուինք:

- Ո՛չ, մեր տունը աւելի մեծ է:

- Տանիքը շատ աւելի մեծ է: Ընդհանրապէս մը կը պատրաստենք, քեֆ կ'ընենք: Առողջ մնանք ամեն ինչ կ'ընենք:

Ու այսպէս, իւրաքանչիւր ընտանիք առանձնացաւ իր տան մեջ: Չէ որ մարդ խօսելով, բաժնեկցելով հոգին կը թեթեւցնէ ու կը հանգստանայ: Մարդ արարածը ընկերային էակ է, անկարելի է որ առանձին ապրի: Կեանքը գեղեցիկ է, երբ մենք կը վայելենք անոր բիւր բարիքները, կ'աշխատինք, կը տքնինք, դժուարութիւնները կը յաղթահարենք, կը վայելենք մեր հարազատներուն, բարեկամներուն, դրացիներուն ներկայութիւնը, դժուար պահերուն անոնց անվերապահ մօտեցումն ու աջակցութիւնը:

Մարդ արարածը իր լաւ ու վատ օրերուն իր նմանին կը կարօտի, մարդը մարդով է գեղեցիկ ու կեանքը մարդով է լիարժէք:

Առողջ մնանք ու վայելենք մեզի շնորհուած կեանքը, վառ պահելով մեր հաւատքը, յոյսն ու սէրը:



պէս տունը նստեր ենք:

-Ո՛վ ըսաւ, որ կիները տունը նստան այդօրերուն: Ո՞ր ուսուցչուհին դպրոցէն բացակայեցաւ, ո՞ր խաչուհին թերացաւ իր պարտականութեան մեջ,- կանանց իրաւունքներու պաշտպան Սեւանն էր Արամին արտայայտութենէն ներդաշնողը:

-Ես ծանծրացայ ամեն օր կնոջս նոյն յանկերգը լսելէն՝ «Յերի՛ք է ծիսես, տունը բուխերիկի վերածեցիր: Տղոցդ խօսք հասկցո՛ւր, տունը թո՛ղ նստին, փողոցը շուն չկայ: Գնա՛, կանաչեղէն բե՛ր, շո՛ւտ վերադարձիր, հոս-հոն չէրթաս»:

-Տուն վերադառնալէ վերջն ալ չես ազատիր՝ «Կօշիկներդ դրան առջեւ հանէ՛, մտի՛ր, ձեռքերդ լուա՛, հագուստդ ալ փոխէ՛»:

-Քորոնա է, թէ՛ քուրա, չեմ գիտեր, միայն գիտեմ, որ անոր գերիները դարձանք,-գանգատողը վարպետ Սահակն էր, միջին տարիքի վարպետ երկաթագործ մը:


-Իսկ ես, մինչեւ այս քորոնա կոչուած անիծեալէն ազատիմք, ջիղերու խանգարում պիտի ունենամ: Ամբողջ օրը լուրերը մտիկ կ'ընեմ, գիշերն ալ քունս կը խանգարուի:

-Յերի՛ք է գանգատիք, հապա մենք՝ կիներս, ի՞նչ ըսենք. ամբողջ օրը խոհանոցէն ասոյին չենք գար: Առաջ միայն անօթեցողը կ'ուտեր, հիմա՝ ծանծրացողը: Բաց պիւֆէի վերածուած է մեր ճաշասենեակը:

-Ի՞նչ ընենք, մամա՛, մենք ալ ամեն ինչէն զրկուեցանք, թէեւ դասէն ու դպրոցէն կը գանգատէինք, արձակուրդ կը սպասէինք, բայց ասի արձակուրդ չէ, բանտարկութիւն է:

-Այո՛, Սարօ՛, իրաւունք ունիս: Այսօր դպրոց հանդիպեցայ, ամառն ուրիշն էր: Ի՞նչ իմաստ ունի դպրոցը առանց աշակերտութեան: Աշա-

ՊԱՏՐԱՄՍ ԵՆՔ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ



Լուսին Ապաճեան-Չիլմբօշեան

Պսակածե ժահիրը որքա՛ն արագ մեր առօրեայէն ներս խուժեց, ասուպային արագութեամբ մեր գրոյցներուն գլխաւոր նիւթը դարձաւ: Աներեւոյթ ժահիր մը իր հետ բերաւ երեւելի պատուհաններ, աննախադէպ իրավիճակներ յառաջացուց, ասոնց կողքին նաեւ կեանքը նոր ձեւով ընկալելու եւ ապրելու ըմբռնում մը կազմաւորեց:

«Տունը մնանք» կոչով տուն նստաւոր աշխարհը, հյուսիս, հնազանդ, առանց առարկելու: Կրնայի՞ք պատկերացնել մարդիկը այսքան հնազանդ դարձնելու այլ ձեւ մը: Ահարկու պատերազմներն անգամ այսքան սարսափիչ չէին մատնած բոլորս: Ռումբերուն տակ կը ճեմէինք առանց վախի, վարժուած ըլլալով կացութեան, ամենէն վատ պարագային մօտակայ ապաստանարան մը մեզ կրնար փրկել ինկող ռումբերէն:

Մարդկութիւնը որքան ալ դժգոհի տիրող կացութենէն, շուտով կը փորձէ համակերպիլ անոր: Երբեմն պարզ նիւթերու, գաղափարներու

դութիւնը շարունակող ուսուցիչներ բաւական դժուարութեանց դէմ կանգնեցան: Կարգ մը ուսուցիչներ նորարարութեան յարմարելու ընդունակ ըլլալով շուտով համակերպեցան:


Թէեւ բոլորն ալ տագնապեցան, բոլորն ալ ձեւեր որոնեցին աշակերտին գիտելիքը այլ ձեւերով մատուցելու համար, սակայն ոմանք դժգոհեցան, որովհետեւ չէին կրնար քայլ պահել, ուրիշներ ալ նոր միտքեր յղացան:

Ճնողներն ալ իրենց կարգին դժուարութիւններ ունեցան, անշուշտ, որովհետեւ պատրաստուածութեան պակասն էր, որ բաց օղակ մը կը յառաջացնէր անոնց եւ նոր գործելաճիւղ միջեւ:

Նոյնն էր պարագան այլ բնագաւառներու մեջ:

Երաժշտական դպրոցներ, մարզական միութիւններ, կիրակնօրեայ դպրոցներ սկսան իրենց գործունէութիւնները առցանց ներկայացնել:

Դիմատետրի էջերը ողողուե-



կամ գործելածեւի մեջ անգամ տարակարծիք կ'ըլլանք, կը վիճինք, հարցերու լուծման տարբերակներ կ'առաջարկենք, այս ժահիրը սակայն, գոնէ մեկ հարցի շուրջ, բոլորս միատեղ մտածելու կ'առաջնորդէ:

Համացանցը այս օրերուն համար պատրաստուած էր հասանաբար: Ան էր, որ հասաւ օգնութեան՝ ամբողջութեամբ ծանծրայ ընելու մի ուղղուող 21-րդ դարու հասարակութիւնը:

Համացանցը առանց յապաղումի նորարարութեան մղեց մեզ, սակայն ոմանք դժուարացան որդեգրելու նոր ձեւով ապրելու, գործելու, փոփոխութեանց արձագանգելու այս ձեւը:

Շատ մը ծրագիրներ համացանցով շարունակուեցան: Աշխարհի տարբեր երկիրներու մեջ ուսուցման ընթացքը չկասեցնելու միտումով անյապաղի գործ դրուեցաւ առցանց դասաւանդումը: Յառաջացած երկիրներու մեջ այս տարբերակը սովորական դարձած էր արդէն: Սակայն երբ փորձեցինք մեր իրականութեան մեջ ներառել գայն՝ ինչէ՛ր ի յայտ եկան:

Աւանդութիւնները պահող եւ դասական ընթացքով դասաւան-

ցան տարբեր տեսերիկներով: Դառնալով ձիրքերու եւ տաղանդներու յայտնաբերման հարթակ:

Աղետը համաշխարհային տարողութիւն ունենալով, համաշխարհային հակադարձութեան գործելաճ մը ծնունդ առաւ: Աշխարհի մեջ նշանաւոր համալսարաններ սկսան տարբեր ասպարեզներու մեջ անվճար դասընթացքներ տրամադրել նաեւ:

Շարքը երկարեցաւ...

Թանգարաններ սկսան առցանց այցելուներ ընդունիլ, գրադարաններ իրենց հարիւրաւոր գիրքերը բաց յայտարարեցին ընթերցողներուն, մանկական հեքիաթներու ձայնագրուած պատումներ տրամադրուիլ սկսան, մեներգներ, համոյթներ, եթերագրոյցներ, կրօնական պատգամներ եւ այլն, բոլորը բաց համակարգի վրայ, հասանելի է բոլորին:

Այս բոլորը որքան ալ հրապուրիչ եւ ազդու ըլլան, սակայն, մարդկային յարաբերութիւններուն, ընկերային հաւաքներուն, դէմ առ դէմ նստած գաղափարներ փոխանակելուն եւ ուսուցիչ-աշակերտի միջեւ կենդանի յարաբերութեան համն ու հոտը չեն կրնար տալ:

ՊՍԱԿԱԶԵՒԻ ԺԱՀՐԸ ԵՒ ԳԼԽԻՎԱՐ ԴԱՐՁԱԾ ԱՇԽԱՐՀԸ



Սեան Ա. Մանուկեան

Մենք խաղաղ էինք մեր լեռներուն պէս, քորոնան հողմի պէս ներս խուժեց վայրագաբար: Բանաստեղծ Յ. Շիրազին ներողամտութիւնը պիտի խնդրէի, իր բանաստեղծութեան այս տողերը այլափոխելուս համար:

Մարտ ամսուան սկիզբն էր: Լուրերէն, դիմատետրի էջերէն, պատկերասփիւռն եւ այլ լրատուական միջոցներէ լսեցիք պսակած եւ ժահրին կամ Covid 19-ի մասին: Լսեցիք ու ծանօթացանք նաեւ Չինաստանի Ուհան քաղաքին մասին: Իմացանք նաեւ, թէ չղջիկ եւ օձ ուտելու միջոցաւ սկսած է փոխանցուիլ այդ ժահրը: Տարօրինակ մարդ արարած, ինչէ՞ր կ'ուտես այլաստեղծ:



Այս բոլորը ընկալեցիք որպէս սովորական լրատուութեան մը տարօրինակ մէկ բաժինը:

Լուրը ականջի ետեւ նետելով առաջ անցանք: Ի՞նչ հոգ, մենք ո՞ւր, Չինաստանը ուր: Մենք պատերազմ տեսած ժողովուրդ ենք, երբ հրթիռ իյնար, այնքան ատեն որ մեր գլխուն կամ մեր տան վրայ չէր իյնար, սովորական մեր օրը կը շարունակէինք: Բայց ծուռ նստիւք, շիտակ խօսիւք, մենք գթասիրտ ու բարեսիրտ ենք, վայրկեանին աղօթեցիք չինացիներուն համար ու ըսիք՝ «Աստուած հասնի անոնց»:

Ժահրի գոհեղանութիւնը հետզհետէ սկսաւ անելնալ եւ արձանագրուեցան առաջին քանի մը մահացողներուն անունները: Ժահրը սկսաւ ոստոսուել, անցաւ Իտալիա, Ֆրանսա, եւ՝ աշխարհի միւս ցամաքամասեր, Ամերիկայի Միացեալ Նահանգներ... Ժահրով վարակուողներուն թիւն ալ սկսաւ աճիլ:

Մենք պատերազմ տեսած ժողովուրդ ենք, քորոնան եթէ հոս գայ, ինք կ'ոչնչանայ: Քորոնան Սուրիոյ սահմաններէն ներս չի կրնար թափանցել, կը վախնայ: Քորոնան մեզ մէ պատիկ է, իրմէ՞ պիտի վախնանք, մենք այդքան բան տեսանք, որ այս աներեւոյթ ժահրէ՞ն պիտի սոսկանք... ըսիք ու անտարբեր մնացիք:

Ու յանկարծ փոխուեցաւ ամեն բան եւ քորոնան մոռցնել տուաւ անցածը:

Մարտի կիսուն յայտարարուեցաւ, որ դպրոցները պիտի փակուին մինչեւ Ապրիլ ամսուան սկիզբը: Պետական քննութիւն ունեցող պաշալորիայի եւ պռովէի աշակերտները, համալսարանի ուսանողները շարունակեցին՝ այսքան ժամանակ կը պատրաստուէին յետաձգուած տեսնելու քննութիւնները, հիմա ի՞նչ ընել, սպասե՞լ, տրո՞վի: Միակողմէ, մնացեալ կարգերու աշակերտները ուրախ էին, երկինքէն շնորհուած արձակուրդ մըն էր անոնց:

Առաջին քանի մը օրերը սովորական արձակուրդի մը ուրախութիւնը ապրեցանք: Մարդիկ սկսան պտոյտներ կազմակերպել, իրարու այցելել եւ այլն: Չբաղումներու այս շարանը այնքան երկարեցաւ, որ փոքրերէն ոմանք քորոնան տօն մը, սիրելի անձնաւորութիւն մը կարծեցին, որուն մասին հետաքրքրական պատմութիւններ ալ սկսան հիւսել:

Բայց լրջութիւնը աստիճանաբար հանգրուանեցաւ, երբ բոլոր միութիւններուն ձեռնարկները, տօնակատարութիւններն ու հաւաքները յետաձգուեցան: Մարդիկ օդը դուրս տուող փուչիկի մը պէս յուսախափ դարձան: Քանի մը օր վերջ պատկերներն ու ուրախ աշակերտներն ու իրենց ծնողները սկսան տունը մնալ ու ձանձրանալ, անոնք քորոնային վտանգը ըմբռնեցին: Ալ կատակ չկար: Ալ տունէն դուրս ելլել չկար, ձեռքերը պէտք էր տեսաբար լուալ, տունէն ներս մտնելուն կօշիկները հանել, ամեն բան հակա-նեխել, սխտոր ուտել, քացախ խմել...

Պողոտաներն ու բնութիւնը շունչ քաշեցին: Ծուկայ, դպրոց, փողոց... ամեն տեղ հականեխուեցաւ: Վերջապէս մեր փողոցները մաքրուեցան, այնպէս ինչպէս մաքրուեցաւ օդը: Բոլորը գործէ դադարեցան, միայն մայրերուն աշխատանքը կըրկնապատկուեցաւ:

«Մամա՛, անօթեցանք: Մամա՛, ձանձրացանք: Այս գանգատները խոհանոցը արգելափակեցին մայրերը: Ընտանիքի անդամները, օրը 24 ժամ իրարու հետ անցընել սկսան, վեճերն ու ըսի-ըսաները շատցան:


Բջիջային հեռաձայնները բարեբախտաբար մեղմացուցին վիճակը: Կեանքը դարձաւ առցանց: Դասերը, գանազան գործունեութիւնները համացանցի ճամբով, իւրաքանչիւրը իր տունէն սկսաւ սփռել: Մէկ խօսքով կեանքը ելեկտրոնային դարձաւ ու փոքրացաւ աշխարհը, դարձաւ մէկ ընտանիք:

Մարտ ամսուան տօները ի՞նչ եղան... Ուսուցիչներու տօնը այս տարուան պէս տխուր չէր անցած: Ընտրահարութիւնները առցանց փոխանակուեցան, սակայն ուսուցիչները նուերները առցանց չկրցան ստանալ:

Քանի մը օրուան տարբերութեամբ, 21 Մարտին Մայրերու տօնը վրայ հասաւ: Զիչ թէ շատ ան ալ առցանց տօնեցիք ու ծանօթացանք բոլորին մայրերուն: Մօր ձեռքերը, սուրբ ձեռքերը օճառն ու ջուրէն, հակաանեխիչ դեղերէն ալ անելի սրբացան, իսկանգործութեան հետեւանքով հայրական քսակները ալ անելի նօսրացան:

Աշակերտական Անկիւն

ՀԱՄԱՏԱՆՔ ՄԵՐ ԵՐԱՉՆԵՐՈՒՆ



Մակտայեան Աւագեան

Կեանքը լեցուն է փորձութիւններով ու մարտահրաւերներով, բայց մեր պարտականութիւնն է անոնց դէմ ելլել մեր երազներով ու նպատակներով: Մենք մեր երազներուն ու նպատակներուն պէտք է հաւատանք, անոնց կառչիք ամեն ուժով, որովհետեւ անոնք կ'որոշեն մեր անձնաւորութիւնը, կեանքին ուղղութիւն կու տան եւ մեր ճամբան կը յստակացնեն դէպի ապագայ:

Ինչ ալ ըլլայ, պէտք չէ յուսահատիւք: Մեր երազներն ու նպատակները ըլլան մեծ թէ փոքր, կարելի թէ անկարելի, մենք ըլլանք յաջող թէ ձախող անձեր, կեանքը ըլլայ արդար թէ անարդար, պէտք է ամեն բան ընել հասնելու համար մեր նպատակին, յաղթահարելով դժուարութիւններն ու փորձութիւնները:

Երազներ իրականացնելու ճամբուն վրայ, պէտք է հեռու մնանք մենք մեզի ուրիշներուն հետ բաղդատելէ: Օրինակ, աշակերտ մը կրնայ շատ աշխատիլ ու դաս տրուիլ եւ իրմէ պակաս տրուող ընկերը անելի բարձր կիշ կրնայ հաւաքել: Այս պարագային չյուսահատիւք, որովհետեւ մեր թափած ճիգը պարապի չ'երթար եւ ամեն մարդ իր ժամանակն ու միջոցը ունի յաջողութեան հասնելու:

Մի՛շտ հաւատանք մեր երազներուն եւ մի՛շտ ջանք թափենք հասնելու անոնց:

ժ. կարգ Ազգ. Զարէն Եփփէ Ծենարան

ՍՈՒՏԻՆ ՈՏՔԸ ԿԱՐԾ Կ'ԸԼԼԱՅ



Միրեյ Չաղլասեան

Ա՛խ, ափսո՛ս... միշտ կ'ուզեցիք ձերբազատիլ մեր տկարութիւններէն, բայց չենք յաջողիր եւ այդ մէկը կը նեղացնէ մեզ: Կան գանազան մարդկային տկարութիւններ, որոնցմէ պիտի անդադարանամ մէկուն՝ ստախօսութեան: Անկախ ներկայիս տարածուած գտած երեւոյթ մըն է, որ տարածուած է մեր առօրեային մէջ, սկսած ընտանեկան կեանքէն հասնելով մինչեւ ընկերային կեանք:

Ոմանք իրենք գիտենք կ'արդարացնեն պատճառաբանելով, թէ ստիպուած են ստելու, պահելու համար գաղտնիք մը, կամ իրենք գիտենք պաշտպանելու համար: Ուրիշներ ալ կ'ըսեն, թէ հաճոյք կը ստանան անկէ: Սակայն կը մոռնան, որ սուտը բնական բան մը չէ: Աստուած երբ ստեղծեց մարդը իր պատկերին պէս, ստախօսութիւնը չդրաւ անոր բնոյթին մէջ:

Ընդհանրացած կարծիք է, թէ սուտը կ'ըլլայ երկու տեսակ՝ «ճերմակ սուտ» եւ «սեւ սուտ»: Դժբախտաբար շատեր կը հաւատան այս կարծիքին եւ չեն գիտեր, որ սուտը սուտ է՝ ի՞նչ ալ ըլլայ: Ամեն սուտ, որքան ալ «անմեղ» թուի մեզի, վնաս կը հասցնէ եւ ի վերջոյ կրնայ բացայայտուիլ, որովհետեւ կ'ըսեն. «Սուտին ոտքը կարճ կ'ըլլայ»: Այդուհանդերձ շատեր իրենց կեանքը հիմնած են սուտի վրայ ու չեն գիտեր, թէ ապագային ինչպիսի՞ դժբախտութիւններու կրնան հասնիլ:

Ստախօս անձ մը ինչպէ՞ս կրնայ փոխուիլ: Մարդ իր կամքով ամեն ինչ կրնայ ընել: Եթէ ան ուզէ յառաջանալ ու ինքզինքը բարելաւելու կամք ունենայ, պիտի յաղթահարէ այս յոռի երեւոյթը, բայց եթէ կամք չունենայ՝ գերին պիտի դառնայ անոր եւ բնաւ պիտի չփոխուի: Մարդկային բոլոր տկարութիւններէն ձերբազատելու համար կարեւոր է կամք ունենալը: Ուրեմն՝ ձերբազատիւք անոնցմէ, մանաւանդ ստախօսութենէն, որ կրնայ քանդել մեր կեանքը:

ժ. կարգ Ազգ. Զարէն Եփփէ Ծենարան

տասնամեակին, այս ալ կ'անցնի: Զիչ մը համբերելը: Պսակած եւ ժահրն ալ յուշ կը դառնայ ու ծիծաղով կը յիշենք ու կը պատմենք այս օրերուն մասին: Կը պատմենք, թէ ինչպէ՞ս յետաձգուեցան յատկապէս մեր երիտասարդներուն երազները, 2020-էն անոնց ակնկալութիւնները: Ուրեմն տունը մնանք ու համբերելը: Անվճար ու վստահելի այլ դարման չունինք առայժմ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Մի՛ գերագնահատեք ձեր կարողությունները: Եթե շատ գայթակղիչ առաջարկներ ստանաք, զգո՛ւ եղեք:



ՑՈՒԼ

Սառնասրտությամբ փորձեցեք լուծել ձեր բոլոր հարցերը: Հին ընկերներու հետ հանդիպումը պիտի բարձրացնե՛ ձեր տրամադրությունը:



ԵՐԿՈՐԵԱԿ

Շատ զգայուն եք: Ինքնատիրապետումը կարելու է դժուարություններ յաղթարելու համար: Բանիմաց մարդոց խորհուրդներուն ականջ տուեք երբեմն:



ԽԵՑՁԵՏԻՆ

Հապճեպ որոշումներ մի՛ գոյացնեք, յատկապես եթե անոնք կը վերաբերին գործնական ոլորտին: Չգոյ՛ջ եղեք ցանկալին որպես իրականություն ներկայացնել:



ԱՌԻՇ

Կարելու է որոշումները առանձին պետք է գոյացնել: Մի՛ ազդուիք նախապաշարումներ:



ԿՈՅՍ

Բարենպաստ շաբաթ է տնային աշխատանքի համար: Օգտուեցե՛ք տունը մնալու այս առիթն ու վերադասաւորեցեք ձեր բնակարանը:



ԿԵՆՈՋ

Դուք մշտապես նորություններ կը փորձեք մուծել ձեր աշխատանքին մէջ: Բարենպաստ շաբաթ է առցանց աշխատանք որոնելու համար:



ԿԱՐԻՃ

Այս շաբաթ կարելիութիւն կ'ունենաք բարելաւելու ձեր տնտեսական վիճակը: Աշխատանքի տարբերակներ որոնեցեք, խուսափելու համար անգործութենէ:



ԱՂԵՂԱՍՈՐ

Դուք խանդավառ եք եւ հմայիչ, չէք ընկրկիր դժուարություններու դիմաց: Բարենպաստ հանգամանքներ պիտի ունենաք յաջողութեան հասնելու համար: Համբերությամբ գիտուեցեք:



ԱՅԾԵՂՁԻՐ

Ձեր տրամադրությունը մեծապես կ'ազդէ ձեր ընտանիքի անդամներուն տրամադրութեան վրայ: Յոռետես մի՛ ըլլաք, դուք յաջողութեան հասնելու մէկէ աւելի առիթներ ունիք:



ՋՐԴՈՍ

Արդիւնաւետ շաբաթ է: Կարելի է ձեր ծրագիրները կեանքի կոչել այս շաբաթ: Ձեր ստեղծագործական ներուժը նկատելիօրէն պիտի աճի:



ՋՈՒԿ

Փորձեցեք խուսափիլ տհաճ մարդոց հետ յաճախակի հանդիպումներէ: Աւելի լաւ է ժամանակ անցընել այնպիսի մարդոց հետ, որոնք լաւատես ու գործակցող են:



ՏՎԱԸ ԱՐԴԻՆԱԲԵՐ ԱՇԽԱՏԱՆԸ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Վերջերս ամենքս կը գանգատիկք երկար ժամեր տունը անցընելէն: Կարծեք «Տունը Մնա՛» նախադասությունը եղած է ժամանակի նշանաբանը: Ինքնամեկուսացումը պայման չէ որ ձանձրոյթի առիթ ըլլայ: Ան կրնայ ըլլալ նաեւ բարեբեր առիթ մը, իրականացնելու կիսատ մնացած ու երկար ատեն ձգձգուած ծրագիրներ: Ուրեմն եկեք մեր ժամանակը լեցնենք հետեւեալ տասը արդիւնաբեր աշխատանքներով:

Ա. Նոր լեզու սորվիլ

Կը յիշե՞ք ինչպէս յաճախ մտածած էք ֆրանսերէն, սպաներէն կամ այլ օտար լեզու սորվելու մասին, բայց միշտ կը գանգատէիք որ ժամանակ չունիք: Ահա սա հիշողութիւնը իրականացնելու այդ մէկը: Կարելի է համացանցէն գտնել բազմապիսի կայքեր կամ բջիջային ծրագիրներ, որոնք կ'օգնեն ձեզ: Այս առումով, յատկապէս ձեռնտու են YouTube-ի կայանները:

Բ. Պահարանը շտկել

Այո, ամենքս կը տառապիկք տակնուվրայ եղած մեր պահարաններէն, ունիկք նուազագոյնը մէկ հագուստ, որ գիտենք անգամ մը եւս պիտի չհագնիկք, կամ տափատ մը, որ շատոնց նեղցած է, բայց տակաւին տեղ կը գրաւէ պահարանին մէջ: Միշտ ուզած ենք պահարանը շտկել, շարել ու կարգաւորել ամէն բան, բայց ժամանակ չենք ունեցած, կամ գոնէ մեր պատրուակը այդ եղած է: Եկեք այս առիթն օգտուիկք, կարգաւորենք մեր պահարանները, ինչու չէ նաեւ տրամադրենք ինչ հագուստեղէնը բարեփոխական միջոցներով, թերեւս այս նեղ պայմաններուն չքաւորի մըն ալ օգնած կ'ըլլանք:

Գ. Երաժշտական գործիք մը նուագել սորվիլ

Մեզ մէ շատեր հաւանաբար արդէն գիտեն երաժշտական գործիք մը նուագել, սակայն շատոնց լքած են այդ արուեստը, յանձնուելով ամօրեայ կեանքի հոսանքին: Այսօր առիթը ունին անոնք ստեղնաշարին փոշին մաքրելու, ձեղունէն կիրթաներն ու շուրթակները իջեցնելու եւ վերսկսելու երբեմնի նախասիրությունը: Իսկ անոնք, որոնք երբեք ծանօթ չեն երաժշտութեան աշխարհին կրնան սոր սկսիլ: Ինչպէս լեզուներ սորվելու այնպէս ալ երաժշտութեան պարագային համացանցը կրնայ մեծապէս օգտակար դառնալ:

Դ. Վերադասաւորել փաստաթուղթեր

Փաստաթուղթերը, ըլլան անոնք ուսման վկայականներ, աշխատանքի վկայագիրներ, կալուածներու պատկանելիութեան պիտակներ, թէ այլ թուղթեր, տարիներու ընթացքին կը կուտակուին եւ յաճախ կը վերածուին մէկ կոյտի: Ինքնամեկուսացումը առիթ է գանոնք վերադասաւորելու եւ անջատ թղթապանակներու մէջ կարգաւորելու, որպէսզի անոնց գործածությունը հետագային աւելի դիւրանայ:

Ե. Գրականութեամբ զբաղիլ

Այս վերնագիրին տակ կ'ամփոփուին թէ՛ գրելը, թէ՛ կարդալը: Եթէ նախապէս փորձած էք գիրք

մը գրել, այս շրջանը լաւագոյն առիթն է այդ նպատակը իրականացնելու, ինչու չէ, թերեւս ձեր հեղինակած վեպը, պատմուածքը, կամ բանաստեղծութիւնը ըլլայ հանրայայտ գրական կտոր մը: Իսկ եթէ ձեզի տաղտկալի կը թուի, փորձեցե՛ք անպայման ընթերցանութիւնը ձեր մեկուսացման ամօրեային անբաժան մասնիկը դարձնել:

Զ. Աշխուժանալ համացանցի վրայ

Եթէ նախորդ կետին մէջ յիշուած թելադրանքին հետեւիք, գրական արտադրանք ունենաք, բայց վարանիք գայն տպարան յանձնելէ, կրնաք նաեւ գայն հրատարակել առցանց: Առցանց կարճ



գրառումներու միջոցով կրնաք նաեւ ձեր միտքերը արտայայտել, առանց ստիպուած ըլլալու գրական հատորներ լեցնելու:

Է. Մարզանք

Որքան ալ տարօրինակ թուի այս մէկը, սակայն ոչ միայն կարելու է, այլ նաեւ անհրաժեշտ է այս փուլին: Տունը երկար ժամանակ անցընողը կրնայ յանձնուիլ անկանոն ուտելու փորձութեան: Ահա թէ ինչո՞ւ այս փուլին մարզանք ընելը, նոյնիսկ թեթեւ, շատ կարելու է:

Ը. Բոյսեր խնամել

Եթէ ներսը մնալէն ձանձրացած էք, ապա պարտեզ մը ունենալը եւ գարնան արեւէն օգտուիլը լաւ գաղափար է: Շատ հաւանաբար դժուար գտնեք այս մէկը, բայց պետք եղածը իսկայ պարտեզ մը չէ. պատշգամը դրուած քանի մը թաղարներ կրնան կազմել պոփոկ պարտեզ մը եւ ձեզի տալ պահանջուած ժամանակն ու հոգեկան հանգստությունը:

Թ. Վերանորոգել տան կահոյքը

Նստարանին պատռած բազմոցը կարծեք ձեզի կը նայի, իսկ բազմաթիւ թափածները կ'աւելի ու աւելի ձեր ջիղերը կը խանգարէ: Ինչո՞ւ չէ, օգտուեցեք այս առիթն եւ լծուեցեք տան կահոյքը վերանորոգելու աշխատանքին: Կրկին կը շեշտենք, եթէ որեւէ աշխատանք իրականացնելու դժուարութիւն ունիք, դիմեցեք համացանցի օգնութեան:

Ճ. Համակարգիչի ծրագրաւորում սորվիլ

Ահա սա լեզու մը եւս որ կրնաք սորվիլ, համակարգիչի լեզուն: Համակարգիչի ծրագրաւորումը հմտութիւն մըն է, որ կրնայ աշխատանքի մէջ ձեզի մեծ առաւելություններ տալ, որովհետեւ ան այս դարու ամենէն պահանջուած հմտութիւններէն մէկն է, եթէ չընենք ամենէն աւելի պահանջուածը:



Ռաֆֆի Սիկատեան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԻՆԻՍՏԵՐԱՆ ՄԻԱՅԱԲ «ՌՈՄԱ»-Ի ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ

Հայաստանի հաւաքականի եւ «Ռոմա»-ի կիսապաշտպան Ջենրիկ Միխիթարեան միացաւ հռոմէական ակումբի «Միասին» ծրագիրին, որուն միջոցաւ խումբը օժանդակութիւն կը ցուցաբերէ պսակածէ ժահրի համաճարակին պատճառով մնունդի կամ բժշկական պարագաներու կարիք ունեցող 60-է վեր տարիքի մարդոց, որոնք ունին ակումբի խաղերու տոմսերու տարեկան անդամագրութիւն:



«Ռոմա»-ի կազմակերպած ծրագիրը գործի անցած է 2 Ապրիլէն սկսեալ: Իտալիոյ մէջ կը գործէ յատուկ հեռաձայնի թիւ, որուն միջոցով նշուած խումբի մարդիկ կրնան կապ հաստատել ակումբին հետ: «Ռոմա»-ի նման ծրագիր մը կազմակերպելու գաղափարը ծնունդ առաւ, երբ յայտնի դարձաւ, որ Իտալիոյ տարեցները կը վախճան այս համաճարակին պատճառով դուրս գալ տունէն՝ սնունդ եւ այլ պարագաներ ձեռք բերելու համար:

ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆ ՊԻՏԻ ՎԱՃԱՌԷ ՆԵՅՄԱՐԸ

Ֆրանսայի Փարիզ Սան Ժերմանի ղեկավարները բանակցութեան գիծ հաստատած են Սպանիոյ ախոյեան Պարսելոնայի պատասխանատու կազմին հետ, առաջարկելով անոնց վաճառել պրագիլցի Նեյմարը փոխան Զրիզ մանին: Sport-ը գրեց, թէ ֆրանսական ակումբի ղեկավարութիւնը մտադիր է ամրան փոխադրաշրջանին վաճառել Նեյմարը: Վերջին շրջանին շրջանառութեան մէջ կը դրուէին տեղեկութիւններ, ըստ որոնց, Պարսելոնայի վարչակազմը խոստացած էր Նեյմարը վերադարձնել քաթալոնեական ակումբ: Այս աշխատանքով ան նուազեցուց պրագիլցի խաղացողին Ռեալ Մատրիտ միանալու կարելիութիւնը: Յիշենք, որ Նեյմար միացաւ ֆրանսական ակումբին 2017 թուականին:



Կիրակի օր անգլիական մամուլը յայտարարեց, որ Չելսի փափաք յայտնած է խումբին միացնել Պարսելոնայի յարձակողական խաղացող Զոթիկին, որ այժմ մէկ տարուան վարձավճառով մաս կը կազմէ Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնխենին: Նոյն խաղացողով հետաքրքրուած են նաեւ անգլիական երեք ակումբներ՝ Մանչեսթըր Իւնայթըդը, Թոթեմհամը եւ Լեսթըր Սիթին: Աւելցնենք, որ Զոթիկին 2018 թուականին Լիվըրփուլէն տեղափոխուեցաւ Պարսելոնա՝ փոխան 145 միլիոն եւրոյի, բայց ան չկրցաւ ինքզինք արդարացնել սպանական ակումբին մէջ, եւ մէկ տարուան վարձավճառով փոխադրուեցաւ Գերմանիա:

ՉԵԼՍԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ Է ՄԻԱՅՆԵԼ ԶՈԹԻԿԻՆՈՆ

Կիրակի օր անգլիական մամուլը յայտարարեց, որ Չելսի փափաք յայտնած է խումբին միացնել Պարսելոնայի յարձակողական խաղացող Զոթիկին, որ այժմ մէկ տարուան վարձավճառով մաս կը կազմէ Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնխենին: Նոյն խաղացողով հետաքրքրուած են նաեւ անգլիական երեք ակումբներ՝ Մանչեսթըր Իւնայթըդը, Թոթեմհամը եւ Լեսթըր Սիթին: Աւելցնենք, որ Զոթիկին 2018 թուականին Լիվըրփուլէն տեղափոխուեցաւ Պարսելոնա՝ փոխան 145 միլիոն եւրոյի, բայց ան չկրցաւ ինքզինք արդարացնել սպանական ակումբին մէջ, եւ մէկ տարուան վարձավճառով փոխադրուեցաւ Գերմանիա:



Կիրակի օր անգլիական մամուլը յայտարարեց, որ Չելսի փափաք յայտնած է խումբին միացնել Պարսելոնայի յարձակողական խաղացող Զոթիկին, որ այժմ մէկ տարուան վարձավճառով մաս կը կազմէ Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնխենին: Նոյն խաղացողով հետաքրքրուած են նաեւ անգլիական երեք ակումբներ՝ Մանչեսթըր Իւնայթըդը, Թոթեմհամը եւ Լեսթըր Սիթին: Աւելցնենք, որ Զոթիկին 2018 թուականին Լիվըրփուլէն տեղափոխուեցաւ Պարսելոնա՝ փոխան 145 միլիոն եւրոյի, բայց ան չկրցաւ ինքզինք արդարացնել սպանական ակումբին մէջ, եւ մէկ տարուան վարձավճառով փոխադրուեցաւ Գերմանիա:

ՊԱՅԵՐՆ ՄԻՆԵՆԸ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ՄԱՐԶԻԶԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Գերմանիոյ բազմակի ախոյեան Պայերն Միւնխենի անցեալ շաբթուան աւարտին երկարաձգեց խումբի մարզիչ Հանս Ֆիլկի պայմանագրութիւնը: Ֆիլկի նոր պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ 2023 տարեշրջանի աւարտը: Աւելցնենք, որ Հանս Ֆիլկ գերմանական խումբին մէջ իր պաշտօնը ստանձնեց 2019-ի սկիզբը, փոխարինելով Նիկո Կովաչին: Ան մինչ այդ Ֆիլկ Կովաչիոյի օգնականն էր:

ՄԱՆՉԵՍՏԵՐԻ ՄԻՔԻՆ ԻՐ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ Կ'ՕԳՏԱԳՈՐԾԷ ՈՐՊԷՍ ՊՍԱԿԱԶԵԹ ԺԱՅՐԻՆ ԴԷՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿԵՐՈՆ

Անգլիոյ ֆութպոլի ներկայ ախոյեան Մանչեսթըր Սիթին Անգլիոյ առողջապահութեան ազգային ծառայութեան առաջարկած է պսակածէ ժահրի համաճարակին դէմ պայքարելու համար «Էթիհատ» մարզադաշտը օգտագործել որպէս բժշկական աշխատակիցներու վերապատրաստման կենդրոն: Ըստ Daily Mail-ի, յառաջիկայ օրերուն յատուկ իրաւիւրուած բժիշկներն ու բուժքոյրերը տարբեր բուժաստատութիւններու աշխատակիցներու համար պիտի մասնակցին դասընթացներու, որովհետեւ երկրին կառավարութիւնը կը պատրաստուի զօրացնել պսակածէ ժահրի համաճարակին դէմ պայքարի միջոցները: Մարզադաշտին մէջ նախատեսուած չէ ընդունիլ հիւանդներ, առ այժմ պիտի բաւարարուին միայն դասընթացքի աշխատանքներով: Զաղաքի իշխանութիւնները արդէն սկսած են պատրաստել սենեակներ, դաշտին մէջ այդ դասընթացքները իրագործելու համար:



ԹԻՒ (2)

	a	b	c	d	e	f	g	h	
8					♔				8
7								♖	7
6									6
5									5
4									4
3				♗					3
2									2
1	♖								1
	a	b	c	d	e	f	g	h	

Նախորդ թիւին պարասխանն է



ԵՐԿՐՈՒՆԵՐՈՒ 13/4



10° 22°

ԵՐԵՐԵՐՈՒ 14/4



12° 23°

ՉՈՐԵՐԵՐՈՒ 15/4



11° 22°

ՀԻՆՎԵՐՈՒ 16/4



9° 20°

ՈՐԲԱՐ 17/4



13° 20°

ՇԱՐԱՐ 18/4



13° 23°

ԿԻՐԱԿ 19/4



14° 23°

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕԴՈՒԵԱՆ ԱՅՅԻՆԵՅՑ ՍՕ ԽԱՉԻ ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ ԵՒ ԱԶԳ. ՊԱՏՍՊԱՐԱՆ

Երկուշաբթի, 6 Ապրիլ 2020-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօգուեան, ընկերակցութեամբ՝ Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի, Ազգ. Վարչութեան ատենապետ Յարութ Զիլիսլեանի եւ Արժ. Տ. Խորեն Զիւլ. Պերթիզեանի այցելեց Սուրիահայ Օգնութեան Խաչի Առողջապահական կեդրոն:



Կեդրոնի մուտքին, սրբազան հայրը ջերմապէս դիմաւորուեցաւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան կողմէ: Սրբազան հայրը շրջելով ՍՕ Խաչի Առողջապահական կեդրոնին մէջ, ծանօթացաւ մատուցուած բժշկական ծառայութիւններուն եւ գրուցեց պատասխանատուներուն հետ ներկայ դժուարութիւններու դիմագրաման առնչուող

հարցերու շուրջ:

Սրբազան հայրը գնահատեց ՍՕ Խաչի մարդասիրական աշխատանքը, յատկապէս պատկաճեւ ժահրէն նախագագ ուշացման համար ՍՕ Խաչի տարբեր յանձնախումբերուն կամաւոր ծառայութիւնը եւ իր գորակցութիւնն ու հայրական օրհնութիւնները ուղղեց ծառայատար աշխատակազմի անդամներուն: Ապա ան Ծաղկազարդի տօնին առիթով ձիթենիի օրհնուած ոստեր բաժնեց անոնց:



ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետ Սեդա Կերկրեան դիտել տուաւ, որ Առողջապահական կեդրոնէն ներս հայ բժիշկները, ինչպէս նաեւ Բերիոյ Թեմի յառաջացուցած Առողջապահական Յանձնախումբին բժիշկներն ու դեղագործները հերթապահութիւն կը ստանձնեն կեդրոնէն ներս, մինչեւ երեկոյեան ժամը 6:00:



Այնուհետեւ սրբազան հայրը ուղղուեցաւ դէպի ՍՕԽ-Ազգ. Պատրաստարան:

Պատասպարանէն ներս, սրբազան հայրը մտերմիկ հանդիպում ունեցաւ Պատասպարանի սաներուն եւ պատասխանատու յանձնախումբին հետ, մօտէն ծանօթացաւ պատրաստարանէն հոգատարութեան, ինչպէս նաեւ տուն մնալու հետեւանքով ի գործ դրուող տնային դասապահերու ծրագրին: Սրբազան հայրը գրուցելով փոքրիկներուն հետ, թելադրեց հետեւիլ ժահրէն պաշտպանուելու բոլոր թելադրանքներուն, ապա իր հայրական օրհնութիւններն ու քաջալերանքը ուղղեց անոնց: Գերշ. Տեր Մասիս բարձր գնահատեց Ազգ. Պատասպարանի Յանձնախումբին հոգատար աշխատանքը եւ Ծաղկազարդի տօնին առիթով ձիթենիի օրհնուած ճիւղեր բաժնեց բոլորին:

Պատասպարանի Յանձնախումբի ատենապետ Զեփիւռ Ռեիսեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Զօր, իր օրհնաբեր այցելութեան եւ քաջալերանքին համար:

Այցելութեան աւարտէն ետք, «Քրիստափոր» Ուսանողական Միութեան անդամները հակաՆԵԻՅԵԿԻՆ ՍՕ Խաչի Առողջապահական կեդրոնն ու Ազգ. Պատասպարանը:



Վերջապէս սրբազան հայրը այցելեց ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոն, որ նորոգուած էր պատերազմէն վերջ, յարկ-յարկ շրջելով ծանօթացաւ կեդրոնի մասնաբաժիններուն եւ մաղթեց, որ պատկաճեւ ժահրին ստեղծած տագնապի աւարտէն ետք միասնաբար կատարեն բարեգարդուած կեդրոնին բացումը:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՅՅԻՆԵՅՑ ՆՈՐ ԳԻՒԼԻ «ՏԻԳՐԱՆԵԱՆ» ԿԵԴՐՈՆ

Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդը եւ իրեն ընկերակցողները երկուշաբթի, 6 Ապրիլի միջօրէին, Նոր Գիւլի ազգային կառոյցներ այցելութեան շրջագիծին մէջ, այցելեցին «Տիգրանեան» կեդրոն եւ ծանօթացան ակումբի տղոց տարած ծառայողական աշխատանքին:



Սրբազան հայրը դիտել տուաւ, որ մեր ժողովուրդի գաւազներուն վկայութիւններէն արդէն իսկ տեղեկացած է, թէ պատերազմի տարիներուն ակումբի տղաքը ինչպիսի՜ նուիրումով, կամաւորաբար ծառայած են ժողովուրդին ու պաշտպանած մեր կեդրոններն ու թաղերը: «Այսօր, ակումբի տղոց կողմէ նոյն թափով կը շարունակուի ծառայողական աշխատանքը, որպէս անգամ պատկաճեւ ժահրի տարածման նախագագ ուշացման ծիրէն ներս, շտապ օգնութեան տարբեր ձեւերու որդեգրումով, օրական 24 ժամ արթուն հսկելով եւ օգնութեան փութալով մեր ժողովուրդին, նոյնիսկ տարբեր կեդրոններու հակաՆԵԻՅԵԿԻՆ ՍՕ Խաչի աշխատանքը ստանձնելով», ըսաւ սրբազան հայրը, իր երախտագիտութիւնը յայտնելով ու օրհնութիւնը տալով ներկաներուն:



Ապա սրբազան հայրը կարեւոր համարեց Սուրիոյ կառավարութեան նախագագ ուշացման կոչերուն անսալը, մինչեւ որ կարելի դառնայ այս ժահրին յարթահարումը եւ մեքէ վերադառնանք մեր բնականոն կեանքին:

Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի տնօրէն Յակոբ Զիլեյճեան յայտնեց, որ տղաքը կը շարունակեն իրենց ծառայութիւնը ինչպիսի պայմաններու մէջ ալ յայտնուած ըլլայ գաղութը: Անոնք հսկողութեան կողքին շտապ օգնութեան կը հասնին, տարեց մեր մամիկներուն եւ պապիկներուն տուն կը հասցնեն իրենց անհրաժեշտ կարիքները եւ 24 ժամ ներկայ են Արամ Մանուկեան Ժողովրդային տուն եւ «Տիգրանեան» կեդրոն, հասնելու մեր ժողովուրդի գաւազներու կարիքներուն:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԻՆԵՅՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԶԱՄԱՐԵԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐԳՈՒՂ ԿԵԴՐՈՆԸ

Երկուշաբթի, 6 Ապրիլ 2020-ի առաւօտուն, Նոր Գիւլ տուած իր այցելութիւններուն կարգին, Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօգուեան այցելեց Զամազգայինի «Զամարեան» մշակութային կեդրոն, ընկերակցութեամբ՝ Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի, Ազգ. Վարչութեան ատենապետ Յարութ Զիլիսլեանի եւ Արժ. Տ. Խորեն Զիւլ. Պերթիզեանի:



Կեդրոնի մուտքին, սրբազան հայրը դիմաւորուեցաւ Զամազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան եւ «Զամարեան» մշակութային կեդրոնի հոգաբարձութեան անդամներուն կողմէ: Սրբազան հայրը շրջելով Զամազգայինի կառոյցէն ներս մօտէն ծանօթացաւ կառոյցին, շինարարական տարուող աշխատանքներուն եւ Զամազգայինի միաւորներու մշակութային գործունեութեան յատկացուած իւրաքանչիւր բաժնի: Շրջ. Վարչութեան ատենապետ Պերճ Պօղիկեան դիտել տուաւ, որ շինարարական աշխատանքները աւարտելով, կառոյցը մշակութային ամբողջական կեդրոնի մը պիտի վերածուի՝ իր երգչախումբի, պարախումբի, կերպարուեստի, երաժշտանոցի, թատրոնի եւ հայագիտական հիմնարկի յատուկ բոլոր բաժիններով:



Սրբազան հայրը գնահատեց հայ մշակոյթի պահպանման համար Զամազգայինի տարած գործունեութիւնը, հակառակ պատերազմին գործած աւերներուն, եւ իր հայրական օրհնութիւնն ու ամբողջական գորակցութիւնը յայտնեց Շրջ. Վարչութեան, Ծաղկազարդի տօնին առիթով ձիթենիի օրհնուած ճիւղեր բաժնեց բոլորին: